



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4534

1888



2010

\$ 2002
m

Հրատար. Կենդրունական Գրադարանանոցի:

Ն. ՑԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ԵՒ

ՕԿՏՈՅԱԿՈՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴԻ ՏԻՊ

Գիշեր և 35 կող.

Թ. Ի Ֆ Լ Ի Զ

Տպարան Մոլյան Վարդամեանի

1888

91.39-8

S-37

491-99-8

S-A5

5.

Ն. ՏԵՐ-ՂԵՂՈՒՆԴԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

ԵՒ

ՍԿՂԲՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՒՄ ՏԻՊ


Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մոլոկո Վարդանեանի

18-18



(490)
18



ՅԱԹԵԶԱԲԻՆ

Մայրենի լեզուի առաջին տարին անհերթ անզամ տպագրութեան ենք տալիս: Մտադիր ենք, եթէ հանգամանք ները ներեն, առանձին գրքով լուսատրել մանրամասնաբար, թէ ինչ ու ինչ փոփոխութիւններ ենք մոցրած սոյն գրքի մէջ, նախընթացների համեմատութեամբ, ինչ ուղղութեան ենք նետեած առհասարակ եւ ինչպէս պէտք է գործադրել սրան: Առաջմ միքանի դիտողութիւններով բաւականանք:

Մեր դասագիրը գործ ածող ուսուցիչը բարյականութեան է՝ իրադարձութեան դասերը պէտք է կցէ լեզուի դասերին: Մեր եղանակի առանձնութիւնը նենց դրա մէջն է. աճու ուղարկու սկզբունքուն պատճեննեան, որի հետո ուղարկու իրադարձութեան պէտք էնի, և ուշ ուղարկույթ անոնցը պէտք է վերլուծութեան մեջ ուղարկու սկզբունքնեւը համար: Ուրեմն մեր առաջարկած իրարանցիւր դասը, գրքի առաջին եւ երկրորդ շրջաններում, (այբբենական մասի մէջ), երեք աստիճան ունի: ա՝ բարյականութեան, բ՝ իրադարձութեան, գ՝ իրադարձութեան: Վերջին աստիճանը, իւր կարգին, որպէս լեզուի դասերի հիմն, ունի շրջաստորածիաններ՝ Ա, Վերյուծութիւն առարկայի և այլն, Բ՝ Շահնշահը համեմատութիւն, Գ՝ Հանօթ հնչիւններ անշահներում, Դ՝ Դրանեան:

Սոյն նպատակով, այբբենական մասի մէջ, իրարանցիւր դասի համար դրել ենք մի պատկեր, որ բարյակարքութեան եւ իրագննութեան նիւթը է ամփոփում մէջը—իմարկէ որքան հնարաւոր է մի ուրուազմի մէջ ամփոփել ալդ ամենը: Պարզ իրագիտութիւնը, այսպիսով, կորցնում է իւր չոր ու ցամաք կերպարանքը եւ գուգակցում է այնպիսի վարժութիւնների, որոնք թէ գրառում են մանուկներին եւ թէ զարգացնում:

Հասկանալի կացուցանելու համար, կը դնենք մի դասիւր մանրամասնութիւններով:

Դօ. цензурою, Тифлисъ, 14 Сентября 1887 г.
Тип. М. Варданянца, Тройц. пер., д. № 11.



Շուն

1. Բարոյախօսական՝

Առաջինը պատմում եւ պատմել է տալիս նետենեալ բարոյակրթական առակը.

Մի շուն կար: Մի օր այս շունը՝ մի կտոր միս բերանին, պիտի անցկենար կամուրջով: Անցկենալիս ցած նայեց ջրին և տեսաւ որ մի ուրիշ շուն գնում է ջրի միջով՝ բերանին բռնած մի մսի կտոր: Ըստ ագահութիւնը շարժուեցաւ. նա կլանչեց ու ցած թռաւ կամուրջից և կամեցաւ միւսի ձեռքից խլել մսի կտորը:

Բայց ի՞նչ. ցած թռչելիս՝ իր բերանի կտորը վեր դցեց՝ ջուրը տարաւ. ջրի մէջն էլ ոչ շուն գտաւ, ոչ մըսի կտոր. կենդանին խարուել էր իր ստուերից: Ագահութիւնը զրկեց նրան իր ունեցածից:

2. Իրազննական՝

Զրուցատրական ձեռով եւ նետենեալ նարցմունքների միջնորդուրեամբ ծանօթանալ շամբ—~~բարձրէնին~~:

—Որտեղ է ապրում շունը: Ի՞նչ է ուտումնա: Ըստ ի՞նչպիսի կենդանի կարելի է անուանել՝ ապրելու տեղին նայելով: Խոկ կերածին նայելով: Քանի մասից է կազմուած շան մարմնը. ո՞րոնք են այդ մասերը. շան գլխի վրայ ի՞նչ ենք տեսնում: Գլուխն ի՞նչով է միացած բնի հետ. ի՞նչպիսի բուն ունի շունը. յետեւ շունն ի՞նչ ունի. ի՞նչպէս կանուանենք շան ստորին մասերը. քա՞նի ոտն ունի նա. ի՞նչ մասերից են կազմուած ոտները: Եւրաքանչիւր թաթի վրայ քանի մատն ունի. ի՞նչով են զինուած մատները. ոտներին նայելով շունն ի՞նչպիսի կենդանի է ասվում: Խնչի ենք մենք վախենում շանից. ի՞նչով է կծումնա: քանի ժանիք ունի:

Զրուցատրուրեան արդիւնքը պիտք է մօտառրապէս նետենեալը լինի.

«Ծունն ապրում է տանը. նա ուտում է չաց և կաթ, բայց աւելի սիրում է միս. նա ընտանի մասկեր կենդանի է:

Ըստ մարմինը կազմուած է չորս մասից՝ գլուխ, պարանոց, բուն, ոտներ: Ըստ գլխի վրայ մենք տեսնում ենք՝ բերան, քիթ, աչքեր և ականջներ: Ըստ գլուխը միացած է բնի հետ պարանոցով. նրա բունը կոլոր է. բնի յետեւ նա ունի երկար պոչ: Ըստ ստորին մասերը կոչվում են ոտներ. նա ունի չորս ոտք. իւրաքանչիւր ոտք բաղկացած է երեք մասից՝ ազգր, ոլոր և թաթ. ամեն մի թաթի վրայ չորս-չորս մասներ ունի, որոնք զինուած են սուր-սուր եղունգներով—Ճանկերով: Ոտներին նայելով շունը չորսոտանի կենդանի է կոչվում: Եւր սուր ժանիքներով շունը կծում է մարդկանց. զրա համար էլ նրանից վախենում ենք: Ծունը իւրաքանչիւր ծնոտի վրայ երկու ժանիք ունի:

3. Կարդալ-զրել, որ ունի երեք ստորաստիճաններ:

ա. ~~առաջիւր վերածում~~ է առարկալի անունը—~~շուն~~:

«Մենք նախընթաց դասի մէջ զննեցինք շունը իրեւ առարկայ, խոկ այժմ կը քննենք նրա անունը—~~շուն~~—իրեւ բառ: Երբեւ առարկայ զննելու միջոցին, մենք նայեցինք շան վրայ, մենք դիտեցինք նրան աչքերով: ուրեմն զննութիւնը կատարեցինք տեսանելով միջնորդութեամբ: Խոկ այժմ շունը չ'կայ այլեւ, մենք կամենում ենք խօսել նրա անուան—~~շուն~~ բառի վրայ: Արդեօք առարկայի անունը նշյապէս կարելի է քննել տեսողութեան միջնորդութեամբ: Ո՛չ: Ուրեմն ի՞նչպէս կամ ի՞նչի միջնորդութեամբ զննենք շունը բառը:

—Այ ինչպէս: Երբ մենք զննեցինք շանը իրան, նա մեր աչքի առաջն էր, մենք նրան տեսնում էինք աչքով: Խոկ այժմ շան հետ էլ մենք գործ չ'ունինք. այժմ միայն պէտք է իմանանք, թէ ինչպէս է շինուած այդ առարկայի անունը՝ ~~շուն~~ բառը: Խոկ այդ իմանալու համար պէտք է լաւ լսենք.—~~շուն~~ ու ու ն (կրկնում է միքանի անգամ): Ուրեմն առարկան զննեցինք աչքով, խոկ բառը պիտի զննենք ականջով: Դէ՛չ ականջներդլաւ սրեցէք և ի՞նչ որ կ'ասեմ: լաւ լսեցէք.—~~շուն~~ (կպցնում է հնչիւնը միմեանց առանց և տառի օգնութեան և արտասանում է նրան ատամների արանքից): Բոլոր բանն ասացի: Պետրոս, ասա միևնույն հնչիւնը: Սարգիս, դու ասա:

Արամ,—դու . . . Ասացէ՞ք ամենքդ խմբովին : Այժմ լաւ լսեցէ՞ք. կարող եմ բաց բերանով և պարզ ու երկար ձայնով արտասանել այդ հնչիւնը : Փորձենք (փորձում է և փորձել է տալիս) : Ուրեմն շնորհ ձայն է. նա գծուար է ասվում : Լաւ. լսեցէ՞ք այժմ :

Հ ու ու ու : Այժմ բոլոր բառն ասացի : — Ո՞չ. կեսը, միայն երկու մասը, երկու հնչիւնը : Այժմ դու ասա, Հայկ, դու, Կարապետ. ամենքդ միասին ասացէ՞ք : Աւարդան, ասա առաջին հնչիւնը : Արամ ասա երկրորդը : Մկրտիչ, կրկնի՞ր երկուսն էլ : ձգիր մինը միւսի յետեկց . այժմ կարճ ասա : Լաւ. հիմա լսեցէ՞ք. դուք տեսնում էք, որ երկու հընչիւնը կարելի է ձգած ասել — և կարելի է կարճ ասել — ։ Այժմ դու, Յովհաննէս, ձգիր հնչիւները միմեանց յետեկց . ասա նրանց կորձ՝ կպցրած : — Մինաս, ասա միայն առաջին հնչիւնը : Մկրտիչ դու երկրորդն ասա . Յոլակ, ասա երկրորդը, յետոյ առաջինը, ձգիր, կպցրու : Ասացէ՞ք միասին իրկրորդ հնչիւնը, ապա առաջինը, ձգեցէ՞ք. այժմ կարճացրէ՞ք ի՞նչ ստացանք . . . Հ ի՞նչ է նշանակում . . .

Այժմ լսեցէ՞ք նորից . Հ ու ն ն ն : Հիմա բոլոր բառը ձգեցի, թէ էլլի բան մնաց : — Բոլորը : — Ուրեմն քանի ձայն կայ շուն բառում : Ասա, Արամ առաջինը . դու, Կարապետ երկրորդն ասա . ձգիր, այժմ կպցրու : Մինաս, ասա երրորդը, երկրորդը, առաջինը : Հայկ, ձգիր Մինասի ասած բոլոր հնչիւները երկար . կրկնեցէ՞ք ամենքդ . այժմ կարճացրէ՞ք . ի՞նչ ստացանք, Գարեգին . (նուշ) Ի՞նչ է նշանակում . . .

Բ. Հնջիւների համեմատութիւնը .

Այժմ քննենք ամեն մի հնչիւնը առ առ ձին :

— Քանի հնչիւն կայ շուն բառի մէջ, Ո՞րն է առաջինը, ո՞րն է երկրորդը, երրորդը : — Այդ հնչիւներից ո՞րն է աւելի պարզ ասվում, իսկ ո՞րն է խորհ ասվում :

— Լաւ. ուրեմն՝ ապարզ է ասվում, նրան կարող ենք հելուսունուն ձգել — արտասանել, նա որոշ ձայն ունի . իսկ շնորհ ձայն են հանում : Նրանց հեշտութիւնով ձգել պարզ ու բարձր արտասանել չենք կարող . նրանք ուժուուր են ասվում, կ'ասես թէ խեղդվում են ատամերիդ արանքում :

Ուրեմն այդ հնչիւններից մէկին մենք կ' անուանենք ձայն ունեցող — յայնուուր, իսկ միւսներին կ' անուանենք ձայն չ'ունեցող — բարձրայն : — Ո՞րին կ' անուանենք ձայնաւոր հնչիւն, Գարեգին . իսկ որոնց ենք ասում բաղաձայն հնչիւններ, Հայկ : Ասացէ՞ք ամենքդ ձայնաւոր հնչիւնը . այժմ առաջին բաղաձայն հնչիւնը . — այժմ վերջինը : « Ուսուցիչը պէտք է աշխատէ, որ շ և հնչիւններն արտասանելիս ը ձայնը չ'կպցնեն նրանից, այլ արտասանեն ատամերի մէջ . և հնչիւնը պէտք է արտասանել երկու ը-ի մէջ միայն առանց ը-երի ձայնը զգալի կացուցանելու . միւսոյնը պէտք է իմանալ և միւս բաղաձայների մասին այսուհետեւ : »

գ. Ծանօթ հնջիւնը անձանօթ բառերի մեջ .

« Այժմ լսեցէ՞ք, տղայք, թէ ինչ բառ կ' ասեմ ձեզ . և աւել, Ի՞նչ բառ ասացի, Կարապետ, Կրկնի՞ր, Մկրտիչ . . . — Այժմ մոտածեցէ՞ք, թէ այս բառի մէջ չ'կայ արդեօք ձեզ ժանօթ հնչիւններից . որն է, Յովհաննէս . Իսկ հուր բառի մէջ ի՞նչ ծանօթ հնչիւն կայ, Ի՞նչ ծանօթ հնչիւն կայ էն բառի մէջ . իսկ ուսն, ուսն, նոր . . . « Այս բառերից իւրաքանչիւրը հարցնել պէտք է պատշաճաւոր ընդարձակութեամբ՝ մէկին ու միւսին, բայց առաւելապէս թոյլերին, և վերլուծել տալոր աշակերտները որոշեն իրանց ծանօթ հնչիւններն անծանօթներից . Երբ թոյլերը կըհասկանան այս տեսակ բառախնդիրներ լուծելու գաղտնիքը և կըկատարեն նրանց բաւարար կերպով : այդ նշան է, որ ամենքը լաւ են հասկացել »

— Ո՞վ է կարող իրանից այնպիսի բառ ասել, որի մէջ ինի ։ Հնչիւնը, Ասա, Հայկ, դու ասա մի ուրիշը : Գարեգին : Մտածեցէ՞ք այնպիսի բառ, որի մէջ լինի ։ Հնչիւնը :

— Լաւ. հիմա կրկնենք բոլորը . քանի՞ հնչիւն գիտենք մենք . ինչպէս անուանեցինք ։ Հնչիւնը . ի՞նչպէս ենք անուանում շ և ն . ինչի՞նք այդպէս անուանում . ի՞նչ կըստանանք, եթէ ձգենք միմեանց յետեկց ։ և շ . Ի՞նչ կըստանանք, եթէ ձգենք և ։ իսկ եթէ կպցնե՞նք, Ի՞նչ կ' ստանանք, եթէ ձգենք ։ և ։ եթէ կպցնե՞նք, ի՞նչ կըստանանք, եթէ ձգենք :

Հ. իսկ երբ կպցնենք. ի՞նչ է նշանակում առաջ. Քանի բառը կարող ենք կազմել և առաջ տառերից (երեք—ուշ՝ շունչ—ուշ՝ առաջ):

դ. Գրելու վարժութիւն.

Հարկան ուսման առաջին շաբաթները ուսուցիչն առանդած կրթինի մանուկներին այն տարրական տեղեկութիւնները, որոնք անպայման պետք է նախորդին բոլոր պատեղ զըրած վարժութիւններին. աղակերտներն այս վարժութիւններն սկսելոց առաջ, զործեականապէս պիտի ծանօթած լինին, քեզ նզ է՝ վեւը, ուրեւը, մէջուրը, ուսպէնը, մէջնը, վեւչնը, ոչը, յուիւը, ուրեւը, մէջը, ուրը, ուրչը, ուսպէնը, մէջը, ուսպէնը, մէջը, յուիւը, բառերը: Այնուհետեւ, եթե աղակերտներն սկըսում են մեր առաջարկած վարժութիւնները (որոնք, պարսք ենք համարում շեխտել, դեռ, ես կարդալու վարժութիւններ չեն, այլ նախապատրաստութիւններ) եւ անցնում են զրութեան, ուսուցիչը պատուիրում է մանուկներին, որ հանեն իրանց քարեւտախտակները: Մանուկները քարեզրից բռնել զիտեն արդին. Երանք զիտեն ազը եւ ձախը, վերը եւ վարը . . . Ուսուցիչը մօտենում է զրատախտակին եւ նախ օղի մէջ, առայ տախտակի վրայ բազում է մի հանդառն չէ՞ (*):

Յետոյ հասկացնելով մանուկներին, քեզ ինքն ինչպէս սկըսեց զիծը, ինչպէս մէրջացրեց, պատուիրում է աղակերտներին զրել միեւնոյն զիծը իրանց քարեւտախտակների վրայ, ինքը անմիջապէս առաջնորդելով բռլիերին եւ բռլի մատներ ունեցողներին:

Վերոյիշեալ վարժութիւններից իրաքանչիւրը մ.կ կամ միքանի դասի նիւր պիտի լինի:

Սոյն մեռվ պետք է անցնել եւ մնացած դասերը՝ էլ, ուժ, բարձր, հաւաք, զիտուու, ունչ, մէջու, ունչ—բոլորը, նախընքա-

(*) Այս եւ հետեւեալ գտների ժամանակ գրութեան վերաբերութեամբ առաջնորդ ունինալու է պ.Ս ակար Տէր-Լ արգւեանի «Գեղագրութեան օրինակը», որի առաջին երեսի սաւը վարժութեւնները յաջորդաբար պէսք է առաջնորդուին մեր ձեռնարկի նուիս պատրաստական տասն վարժութեւններն անցնելու ժամանակ:

ցի հետ 10 դաս: Մեր բացատրական ձեռնարկի մէջ 62—85 երես) ուսուցիչը բառական տեղեկութիւններ կը գտնի այս դասների առանձման ձեւի մասին. Եթե նեղութիւն կրկ առաջնորդ ունենալ նրան: Այնուհետ պակաս է միայն բարոյակրթական նիւրը, որը մենք խոշոր տառերով գետեղած ունինք դասագրքիս զանազան երեսներում, աշակերտներին ապագայում կարդալ տալու համար: Այս առաջին աստիճանի բարոյակիսական նիւրն է աշակ շահ (Երես 3), էլ (6), ուժ (14), հաւաք և վահկները (18), բէ-դաշն (24), կամաւ (11), ունչն եւ բայլը (32), մէջու ու հանճը (35).—Բոլորը զրքի երկրորդ մասի մէջ առաջարկուած են որպէս կնքերցանութեան յօդուածներ, մինչդեռ, այբբենական մասի մէջ նրանք զրուցատրութեան նիւր պիտի լինին:

Սոյն սկզբնական վարժութիւնների եւ դասերի ժամանակ մանուկներին, ինարկէ, զիրք չի տրվում, որովհետեւ դեռ տառագիտութիւնը չի սկսուած, այլ զործ ունինք միմիպան հնչինների հետ: Երկրորդ աստիճանին (տառագիտութեան) անցնելով՝ ուսուցիչը կրնում է աղակերտների հետ միեւնոյն բարոյակրթական եւ իրազննական դասերը փոքր ինչ զնդարձակելով՝ եւ ապա անցնում է տառագիտութեանը նոյն մեռով, ինչպէս առանդել եր հնչինները նախընքաց աստիճանն անցնելիս: Այս մասին ես բառական տեղեկութիւններ կան մեր բացատրական ձեռնարկի մէջ Երես 85—107, որով կարող են օգտուի ուսուցիչները, մինչեւ որ մենք, ինչպէս խոստացնք վերը, կը տանք նոր բացատրական ձեռնարկ այս փոփոխութիւններին համեմատ, որոնք մտած են այս տասներեքերորդ՝ տպագրութեան մէջ: Բացատրական ձեռնարկը ցամկացողներին նրի է տրվում այժմ:

ՄԱՍՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ.

(Այբբենական մասի մէրաբերութեամբ)

Դաս 1. շահ բառի մէջ ու պէսք է ընդունուի որպէս մի տառ, որովհետեւ մի ուրիշ հնիհինի նշան ազիր է:

Դաս 8. **ուշի բառի մէջ** « Թէեւ բարդ հնչիւնի նշանագիր է (լ), բայց պէտք է հասկացնել մանուկներին, որ բառի սկզբում գո հնչիւնի համար կայ մի նշանագիր (») եւ ոչ թէ երկու: Մանուկները գիտեն - եւ օ. գուցէ նրանք - բարդ հնչիւնը կազմեն այսպէս՝ ա. պէտք է հասկացնել մանուկներին, որ բառի սկզբումը - տառը չի կարող գրուիլ:

Դաս 9. Այս դասի մէջ է-ի եւ է-ի տարբերութիւնը պէտք է հասկացնել. այդ տարբերութիւնը բառի սկզբում շատ որոշ է, իսկ բառի մէջը համարեա աննշմարելի: Այնուամենանիւ սկզբումը բառի մէջն էլ նրան փորբ ինչ թանձր հնչելու է, բանթէ լերկ է հնչիւնն է:

Դաս 11. « Եւ օ. տառերի զուգադիպութիւնը բառի սկզբում եւ մէջը: Բառի սկզբում նրանք պահում են իրանց հնչիւնը, իսկ բառի մէջը կարդացվում են միապէս,

Դաս 12. **բառեր:** Այդ դասի ժամանակ միայն պէտք է ցոյց տալ մանուկներին. 1. որ ու պարզ հնչիւնի նշանագիրը բարդուած է երկու տառից, որոնք առանձնանալով, բոլորովին տարբեր հնչիւն ունին —, — 2. որ է եւ — (եւ) տառերը ծովտելով կազմել են **և նշանագիրը**, որը մի տառ լինելով, երկու հնչիւն է ամփափում իւր մէջ, բոլորովին տարբեր — — ից, որ երկու տառ լինելով, մի հնչիւն էր ամփափում. 3. որ՝ և կիսով չափ բարդ հնչիւնն արտայայտելու համար միանում են և եւ — տառերը եւ կազմում են է — թ:

Դաս 13. Մինչեւ ժէ, դասը մենք զիստառեր չենք տալիս. այս դասի մէջ առաջարկուած են րուրը զիստառերի համար յատուկ անուններ:

Դաս 14, 15, 16. Միավանկ եւ բազմավանկ բառեր — տառ եւ վանկ:


Դաս 17. Նուազական եւ փաղաքական մասնիկներ — ա, է, ու-է, է-ա.

Դաս 18, 19. Գլխաւոր առարկայ եւ զործողութիւն — ժետ. զործողութեան երկու ձեւը՝ ա, է և և յետու:

Յաջորդ դասերի վերաբերմամբ մենք աւելորդ ենք համարում ծանօթութիւններ զնել. ուշադիր ուսուցիչը, յուսով ենք, իւրաքանչիւր դաս մասնաւոր դիտողութեան կ'ենթարկէ եւ կը տեսնէ թէ ինչ ունի աւանդելու մանուկներին:

Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Զ Ի Ն


ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ



1. շուն

20


ու, շ, ն. նու, ուշ, նուշ:



2. ԷՇ

Է, ու, շ, ն. Էն, ուշ, նուշ.

Չուն, շէն. Էշ ու շուն. ուշ ու նուշ:




ՀՀ 3. ԱՌՊ — ս, ա, դ.

Էս, սա, էն, նա. Էս, էշ, գէս, գէշ, սէս, սուս,
սուս, սա, ասա. Էս շուն է. սա սագ է. Էն նուշ է:

ՀՀ 4. ԲՐԱՊ — բ, դ.

Էս, սա, էն, նա, էդ, դա, դու, բռւ.
բռն, բան, բադ, բադ, բաշ, դաս, դուք.
բադ ու սագ. դա բադ է. նա սագ է:




24

5. Հաւ - չ, ւ.

նա, նաւ, հա, հաւ, բա, բաւ, դա, դաւ, ահ,
շահ, սահ, գահ, բահ, հունդ, գունդ, հանդ,
սանդ, բանդ. սազ ու բազ. բազ ու հաւ.

Էշ ու շուն:



25


6. օձը - օ, ձ, ը.

դու, ձու, սազ, ձազ, գանձ, սանձ, հունձ,
օշ, օն, օդ. հաւը, բաղը, շունը, սազը,
էշը, օձը:




7. կատու

գ, կ, տ: տուն, տան, տանձ, տատ, տուտ,
շուտ, կուտ, տակ, կէտ, կէս, շէկ, կաւ, նաւ,
գրդակ, գընդակ, կըտաւ, գանակ, նաւակ,
օգուտ, տաշտակ, հաւատ, սահուն:



8. ոզնի

ո, օ, ի, զ, ս, շ: ոտ, ոստ, տիկ, տակ, ձի, ձիզ,
ձազ, զատ, զուտ, ազգ, կուզ, զէզ, սէզ.
ոսկի, ոտիկ, ոստիկ, ոզի, ազի, զատիկ,
զաւակ, կաշի, անզին, տիկին, ընկուզ,
աւազ:



28 9. **ԱԵՂՈՒ** - ե, մ, դ.

եղ, եղ, եկ, ես, եւ, եմ, են.

էգ, էս, էշ, էգ, օղ, ող.

նեղ, նետ, մեղ, մեղ, գեղ, գետ.

մէկ, շէկ, կէտ, կէս, տէգ, մէգ.

աղ, մաղ, մատ, մազ, մաս, կաղ.

եղնիկ, եղան, սեղան, ասեղ, ուղիղ, ուղեղ:

29 10. **ՃԱՆԱ** - ճ.

ճուտ, ճիտ, ճաշ, ճանկ, ճիւ, մաճ, ճիշտ.

տաճիկ, ճիճու, ճակատ, ճընճ-ղուկ.

մաճիճ, ճաճիճ, կալիճ, ճօճանակ:

20

11. ո, օ.

ոտ, ող, ոճ, ողի, ուկի, ոստիկ.

օղ, օդ, օ՞ն, օ՞շ, օդուտ, օղակ.

մոմ, գոմ, գող, դող, տող, հող, հոտ.

հօտ, ձօճ, գօտիկ, կօշիկ, ձօճանակ:

21

12. ու, և, եա.

ո, ւ—ու, ուշ, շուն, բուն, տուն, կուտ.

ե, ւ—եւ, և, սեւ, սւ, կեղեւ, կեղեւ.

ե, ա—եա. սենեակ, մանեակ, հոգեակ.

ես ունիմ մէկ տուն.

տունն ունի տասը սենեակ.

շուշանն ունի գեղանի * մանեակ. * = Յարցիսի

Ոսկանը կըգնէ յաջառու մի տասնեակ մատիտ.

նա տեսաւ սւ օձի կաշին:

* § 14 γεωργίας ή λινού. ein Leinentuch φάσ. Leinentuch, Ε-κατον - Ε-ε

ա, է, ե, ի, լ, ո, օ, ու, եա.
շ, ն, ս, գ, թ, դ, հ, ւ,
ձ, կ, ա, զ, մ, ղ, Ճ, և.

թթ 1, 13.

Ա, Ե, Ո, Ը, Ի, Ի, Օ, Ս, Մ, Ղ, Բ, Գ,
Դ, Կ, Ձ, Շ, Զ, Տ, Խ, Ջ. Աստղիկ, Եղիշէ,
Ոսկան, Ընձակ, Էն, Խսկուչի, Օչան, Սահակ,
Նունէ, Մուշեղ, Ղեռնդ, Բաբիկ, Գագիկ,
Դաս, Կոստանդին, Ճանիկ, Շուշանիկ,
Զատիկ, Տաճատ, Համրօ, Չուիկ:

թթ 2, 14.

Յուտ
Նուշ
Շուն
Տուն
Տուն
Նաւ

Սագ
Բադ
Բան
Մուկ
Մուկ

Նետ
Մատ
Կէտ
Մուկ
Մագ

Զու
Զագ
Ճան
Սան
Կին

Կաւ
Կէս
Տիկ

Դասաւ
Աղ

Տաղ
Վղ

Տաղ
Գող

Ոտ
Ճուտ
Եշ

3, 15.

Կատու	Ոսկան	Աշոտ
Դանակ	Կաշի	Մեղու
Անուշ	Շամամ	Զատիկ
Օղակ	Հասակ	Նաւակ
Անուն	Գաղան	Ճակատ
Ուղիղ	Զաւակ	Հոգեակ
Ուղեղ	Ասեղ	Սենեակ
Ոսկի	Մուշեղ	Մանեակ

4, 16.

Շուշանիկ	Գանձանակ	Աւազաման
Անուշիկ	Աղանի	Անուշաւան
Աւետիս	Ճօճանակ	Աղաւնետուն
Կոստանդին	Աղգական	Մամիկոնեան
Մամիկոն	Եղինի	Օչաննիսեան

17.

Շուն	— շնիկ	Էշ	— իշուկ
Սան	— սանիկ	Տուն	— տնակ
Ոստ	— ոստիկ	Բուն	— բնակ
Անուշ	— անուշիկ	Նաւ	— նաւակ
Մանուկ	— մանկիկ	Հոգի	— հոգեակ
Աստղ	— աստղիկ	Աղաւնի	— աղաւնեակ:

18.

Praefixa

Բամբակը	բուսնում	է:
Ճօճանակը	ճօճում	է:
Մողէսը	սողում	է:
Վահնակը	սահում	է:
Դուկասը	շինում	է:
Մովսէսը	կասում	է:
Սիմոնը	տանում	է:
Մմբատը	տեսնում	է:
Շուշանիկը	մանում	է:


19.

Բամբակը	կըբուսնի:	<i>Բանակ</i>
Վահնակը	կըսահի:	
Սիմոնը	կըտանէ:	
Մովսէսը	կը կասէ:	
Դուկասը	կը շինէ:	
Մմբատը	կըտեսնէ:	
Շուշանիկը	կըմանէ:	
Ճօճանակը	Ճօճանակ	
Մողէսը	Մողէսը	

Լաւ	Գալ	Աղալ	Ունենալ
Լու	Լալ	Լճակ	Օգնել
Լաստ	Տալ	Լեղի	Մանել

Մ Ա Ս Ն Ս Ո Ս Զ Ի Ն

ՃՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ



8 20. Կալ-ր, և.

Նալ	Լող	Լոբի	Լուանալ
Բալ	Լոկ	Լուսին	Լաւանալ
Սրալ	Ուլ	Լեզու	Մօտենալ
Տալ	Կուլ	Լեղակ	Կամենալ

9 21. յորեն-ց, բ: Յ, թ.

Հաց	Կացին	Կերակուր
Ցից	Կարկուտ	Կարկատան
Ցին	Ճագար	Դատաւոր
Ցաւ	Ցերեկ	Գարեգին
Սար	Ցօղուն	Սրտուտիկ
Ճար	Ցուցակ	Գաշտեցի
Սուր	Կարսա	Սարեցի
Գիր	Կորեկ	Տանըցի
Կիր	Գարի	Գեղեցիկ

10 22. յարդ-յ. Յ.

յարկ, յարդ. չամբ, յամբ. յետ, չետ.
չամար, յամառ. յատակ, չատիկ, յատուկ,
յիսուն, յետին, Յիսուս, յուսալ, յարդել:

Բամբակը բուսաւ:
Սահակը սահեց:
Ներսէսը տարաւ:
Գալուստը կասեց,
Յուսիկը տեսաւ:
Լուսիկը շինեց:
Մանուկը կերաւ:
Յիսուսը օրհնեց:

Ներսէսը կասեց կալը:
Գալուստը տարաւ յարդը:
Յիսուսը օրհնեց մանկանը:
Օհաննէսը կերաւ հաց:
Յուսիկը գնեց լոբի:
Յուսիկը տարաւ յարդ:
Դարբինը դարկեց սալին:
Արուսեակը գրեց դասը:



23. **Ճառ** — δ, η· ῥ, θ.

Տառ	Ծիտ	Նուռ	Գարուն
Ծուռ	Զիգ	Ծիրան	Զմերուկ
Ռուս	Զադ	Ծառուկ	Ծիծեռնակ
Զոր	Ծեր	Ծերուկ	Ծիածան
Ծոր	Զեւ	Գուռը	Արծիւ

Ծիր	Կուրծ	Առու	Մեծատուն
Զիր	Գառը	Ծարաւ	Արեգակ
Ծունկ	Սառը	Զմեռ	Առուտուր
Բառ	Դառը	Ամառ	Ռուբէն

12 24. **Ճ-ռւփ** — [թ, փ, թ, ֆ.]

Թաթ	Առոր	Թափ	Փլաւ
Թութ	Աար	Հորթ	Թութակ
Փուփ	Աառ	Հորդ	Փափուկ
Փակ	Թառ	Թեփ	Կանեփ
Թոկ	Փառ	Թուզ	Փետուր
Փոս	Փող	Թուշ	Փողոց
Փոր	Թող	Թան	Թորոս
Թուր	Ծափ	Թումբ	Թոմաս

Թութակն ունի սիրուն վետուրներ:
Ծառն ունի հաստ բռն:
Թուփն ունի կա կուզ ոստիկներ:
Համկը քարակ ծզօտներ ունի:
Թորոսը սուր կացին գնեց:
Փափուկ հաց կերաւ թորոսը:



1999-59
(1990)
48

Թարմ կաթը բերեց ծերուկը,
Լուսիկը կապեց սիրուն գլոգնոց:
Նաղելին կարեց ձեր մակ հաղաւ:
Ուուրէնը կարմիր մատիտ գնեց:
Արուսեակը գործեց մանրիկ սփռոցներ:



13 25. *ոչխար-չ, Խ. Զ, Խ.*

Խոտ	Խունկ	Խմոր	Խաշխաշ
Խաչ	Շունչ	Գրիչ	Խաղող
Խակ	Չութ-	Խրատ	Չամիչ
Չար	Փուչ	Խրամ	Խաւար

Ճար	Չափ	Խմել	Խնդալ
Խոր	Չար	Խլել	Չարչարել
Չոր	Չոփ	Բրիչ	Չարասիրտ
Խող	Մեխ	Խըն-ձոր	Խաչատուր
Խոց	Խաւ	Խըն-դիր	Մըկըրտիչ

14

26. *մարի-ք, Ք.*

Կար	Մարի	Քաթան	Մատանիք
Գար	Մատակ	Քաղաք	Աղաքար
Քար	Մէրուն	Քացախ	Աքաղաղ
Քիթ-	Մաքի	Քարտաշ	Քարաշէն
Քիչ	Քեռի	Քերոք	Քարասիրտ
Քուրք	Քանոն	Քրիստոս	Քրիստափոր
Սարք	Քամի	Մաքուր	Քաղաքացի


15

27. *ջուր-ջ, Ջ.*

Աջ	Ջորի	Ջուշակ
Էջ	Ջրհոր	Գարեջուր
Մէջ	Ականջ	Ջըր-կիր

Գաջ	Ջաղաց	Ջըն-ջան
Ջա՛ս	Բանջար	Ջանիկ
Ջուխտ	Անձար	Ջաւահիր
Շունչ	Ջութակ	Ջրաբերդ

Սագ	—	Սագեր	—	Սագ էր.
Հաւ		Հաւեր		Հաւ էր.
Բաղ		Բաղեր		Բաղ էր.
Նաւ		Նաւեր		Նաւ էր.
Ծառ				...
Մազ				...
Շոր				...
Հաց				...
Ուզտ				...
Զուր	—	Զրեր	—	Զուր էր.
Գիր	—	Գրեր	—	Գիր էր.
Շուն				...
Տուն				...
Տուր				...
Թուր				...
Թուփի				...
Թուշ				...



16. 28. Կով-վ, Վ.


... Վար, վառ, վատ, վարդ, վեզ, վէմ,
վեց, վուշ, Վարդան, Վասակ, Վահան:
Է. Կաւ, հաւ, նաւ, ցաւ, սեւ, թեւ, թիւ,
անիւ, ազնիւ, կոիւ, արծիւ:
Դ. Կով, հով, նով, բով, սով, բարով, տարով,
օրով, ցերեկով, գիշերով, աշխատանքով:
Ե. Որդի, ոսկի, ոզնի, ոստիկ, ոգի, որոճ,
որկոր, որսորդ, ոչինչ, որմիկ, Ուկան:
Ւ. Աւազ, զաւակ, նաւակ, աւագ, հաւատ,
թաւիշ, կաւիճ, զաւաթ, զաւիթ, տւա-
զան, թագաւոր:


17 29. պանիր—պ, Պ.

Պար	Կարապ	Պանդոկ
Պատ	Կապիկ	Պարապ
Պարկ	Կապուտ	Վարպետ
Պինդ	Կարագ	Կապերտ
Պիղծ	Ալլուստ	Պապիկ
Սեպ	Լապտեր	Կարապետ
Պօղ	Պետրոս	Վարդապետ

18 30. իւղ—է-

Ճիւ	Իւր	Գիւղական	Թիւլը
Թիւ	Թիւլը	Աղիւսակ	Թիւշ-
Անիւ	Արիւն	Բարութիւն	Անիւլ
Աղնիւ	Աղիւս	Զարութիւն	Անիւշ-
Արծիւ	Ալիւր	Օզնութիւն	Արծիւշ-
Կոիւ	Աղբիւր	Աղբիւրակ	Պատիւշ-
Պատիւ	Կորիւն	Սառնարիւն	Կոիւշ-





31. Փիղ—Փիլ, Ժանիք.

փ, ֆ, ժ. ֆ, ֆ, ֆ.

Փիղ	—	Ֆիլ	Ժամ	Ժառանդ
Փլաւ	—	Ֆիլաւ	Ժիր	Ժողով
Նաւթ	—	Նաֆթ	Կուժ	Բժիշկ
Փուրգոն	—	Ֆուրգոն	Ժանդ	Արժան
Մափրաշ	—	Մափրաշ	Ուժ	Աժան
Քէփ	—	Քէփ	Բաժակ	Ժպիտ
Փէս	—	Ֆէս	Բաժին	Պատիժ

Փիղը Ժանիքով պաշտպանում է իր անձը:
Բժիշկը բաժակով դեղ տուեց Հիւանդին:
Ժամագործը ֆուրգոնով տեղափոխեց ապրանքը:
Ֆէսաւոր մարդը վողոցներում նաւթ էր վաճառում: Նավթը շատ աժան վառելիք է:

Աշակերտը գրում է դասը գրչով:
Դերձակը շորերը ասեղով է կարում:
Պառաւն իլիկով թել է մանում:
Տանտիկինը կաթնից պատրաստեց իւղ:
Խոհարարը մսից կերակուր եփեց:
Հեղինէն փող տուեց աղքատին:
Հեղինէն աղքատին փող տուեց:
Աղքատին Հեղինէն փող տուեց:
Փողն աղքատին տուեց Հեղինէն:
Մանուկը պատիւ է տալիս ծերին:
Կովն արածում է դաշտումը:
Մանուկը խազաց պարտիզումը:
Պօղոսը կարդում է ուսումնարանումը:

Զաւակ — զաւակներ — զաւակն էր:
Ոսկի — ոսկիներ — ոսկին էր:
Ողնի — ողնիներ — ողնին էր:
Կատու — —
Ցորեն — —
Ոչխար — —
Մատիս — —
Գրիչ — —

Գնդակ — —
 Դանակ — —
 Ասեղ — —
 Ծիծեռնակ — —
 Կերակուր — —

32. Հ. Յ.

...	Է.	Դ.	Ր.	Է.
Յարկ	ԱՇ	Գաթայ	Մայր	Քոյր
Յարգ	ԷՇ	Կաթայ	Հայր	Ծոյլ
Յարդ	Վայ	Քահանայ	Այծ	Թոյլ
Յամբ	Հայ	Ծառայ	Կայծ	Յոյս
Յետ	Բայ	Փեսայ	Այր	Բոյս
Յատակ	ՕՇ	Տեսայ	Այրի	Լոյս
Յամառ	Նոյ	Յետոյ	Այգի	Աշխոյժ
Յունապ	Թէյ	Երեկոյ	Եղբայր	Պարոյր
Յոպոպ	Հէյ	Մօտոյ	Գայլ	Վրոյր

Յիսուսն օրհնեց բարի մանուկներին:
 Մարդիկ չեն յարգում յամառ տղաներին:
 Հայրս հրակրեց ծերունի քահանային:
 Կայծը հրդեհեց խոտի գէզը:
 Գայլը պատառուեց այծի ովերը:
 Այս երեկոյ այգում թէյ կըխմենք:

Մայրս մեզ գաթայ կըտայ, կ'ուտենք:
 Սյրի կինը այծի կաթն էր ծախում:
 Վայ նրան, ով հայր ու մայր չ'ունի:
 Քոյր ու եղբայր աշխոյժ կերպով խաղում էին բոյ-
 սերի մէջ:
 Ծոյլ տղան իւր յոյսն ուրիշների վրայ է դնում:

Ա. Ո. Ա. Ի Օ Տ.

Լուսացաւ, լուսացաւ,
 Լուսն է բարին,
 Ծիսն է ծառին,
 Հան է թառին.
 Աշխատաւոր, վեր կաց բանի,
 Ծոյլ մարդու քունը տանի:
 Երկնքի դռները բաց էր,
 Ուկէ աթոռը դրած էր,
 Քրիստոսը վրէն նատած էր,
 Լուսաւորիչը կանգնած էր,
 Մեծ ու պատիկ գրում էին,
 Արդարները խաղում էին,
 Մեղաւորները լալիս էին:

Ա. Ր Ե Ւ.

Արեւաբեւ Եկ, Եկ,
 Զիզի քարին վեր Եկ.
 Մեր ոչխարին մոխիկ արա,
 Որ գայլը գայ, իմաց արա:

Զ Ի Ւ.

Զիմ է գալիս փաթիլ-փաթիլ,
Աղքատն ասաց՝ տունս է բանել. *)
Պառան ասեց՝ մողիս կորաւ,
Գայլն ասեց՝ փորիս դեղ է:

Դ Ո Ղ Ա Ղ Ո Ւ Ե Ս.

Աղուշը պառկեց աղքի տակին,
Փույ-վույ,
Աչքը գըցեց չաղ հաւի ձագին,
Փույ-վույ.
Նետով կըտամ աչքի տակին,
Փույ-վույ,
Որ մօտ յըգայ նա մեր բակին,
Փույ-վույ:

Զ Ո Կ - Զ Ո Կ Ե Ւ Մ Ի Ա Ս Ի Ւ.

Վարդանիկն ու Սաթինիկը իրար հետ խաղում էին:
Վարդանիկը իր հոն էր պտըտայնում. Սաթինիկը տիկ-նով էր խաղում: Վարդանիկը բարկացաւ Սաթինիկի վրայ. «Իմ հոլին մի մօտենար, ինձ հետ խաղ մի անիր», ասաց: — Դու էլ իմ տիկնին մի ձեռք տար, — պատասխանեց Սաթինիկը նեղացած:



Մանուկները յօնքերը կախեցին: Նրանք հեռացան
իրարից եւ սկսեցին ջոկ-ջոկ խաղ անել: Բայց մենակ սկսած
խաղն էլ երկար ըլքաշեց եւ մեր մանուկները շուտով
վէր գցեցին իրանց խաղալիքները:
Մանուկներն իրանց խաղը ինչի՞ զըշարունակեցին:

Մ զ ա ն

Ամբողջ այբուբենը.

ա օ ւ շ զ է ջ չ ե լ մ հ . ս . ւ .
 ա, բ, զ, դ, ե, զ, է, լ, թ, ժ, ի, լ,
 շ, չ, կ, չ, ձ, գ, ձ, մ, խ, հ, մ, թ,
 ա, թ, ծ, թ, ա, թ, մ, ի, յ, անոն, թ,
 չ, պ, ջ, ռ, ս, գ, տ, ր, ց, ւ, փ, ր,
 և, օ, ֆ:

ա, բ, զ, դ, ե, զ, է, լ, իս, ծ, կ, հ, ձ, ն,
 մ, լ, ն, շ, ո, չ, պ, զ, մ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ր,
 օ, ֆ:

ա, բ, զ, դ, ե, զ, է, լ, թ, ժ, ի, հ,
 չ, պ, ջ, ռ, ս, գ, տ, ր, ց, ւ, փ, ր,
 չ, է, ժ, լ, օ, ֆ:


Գլխագրեր.

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Խ, Լ, Թ, Ժ, Ի, Լ,
 Խ, Ծ, Կ, Հ, Ձ, Ղ, Ձ, Մ, Ց, Ւ, Ռ, Ո,
 Չ, Պ, Ջ, Ռ, Ս, Վ, Տ, Շ, Ի, Փ, Ք,
 Օ, Ֆ:

Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Ք

ՀՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ

ԱՅԲՈՒԲԵՆԻՑ ՅԵՏՈՅ



1. ԴԱՍՏԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԵՒ ԽԱՂԱԼԻՑ

Դառական առարկաներ՝ գիրք, գրիչ, քանոն,
 մատիտ, տետրակ, գրատախտակ, քարետախտակ, քարե-
 գրիչ, թանաքաման, կալիճ...

Խաղալիք՝ գընդակ, տիկին, հոլ, վէգ, չիլիկ,
 չիլկափայտ...

Քարեգուշը դաստիան առաջիւա, է։ Գընդանիը խաղալի+ է։
Մասմիւը. ուեցածիը. ոիկնը. +անանը. նաևաւաճանը. հուը
վենը. ժըլահատը. գըտապահուակը. +ուրեապահուակը։

Գիրք՝ մէջը քաղցր միրգ։ — Ինչ որ գըրուեցաւ գըրի-
չով, չի հանուիլ բահով, բրիչով։ — Մատիտը մատիդ, կօ-
շիկը ոտիդ, ձամբայ որ երթաս, միշտ լինին մօտիդ։ —
Հովք կուզէ խարազան, որ պտոյտ գայ անխափան։ —
Վէգի կարմիրն է սիրուն՝ վաստակ է զարկողներուն։ —
Չուան ցատքին օգտակար շարժմունք է մանկանց հա-
մար։

Առածներ։ — Ով կըկարդայ, նա մարդ ա։ — Ով կըխա-
ղայ, նա կըկաղայ։ Ով որ կ'աշխատի, նա կ'ուտի։

Հանելուկներ։ 1. Գյուխը կտրեցին, սըրտիկը հանեցին,
զինի խըմացրին. լեզուս բացուեցաւ, խօսիլ սկըսաւ։ — 2. Քանի
որ ծեծը կ'ուտիր, ուրախութեամբ կըպտլուիր, երբոր ծեծը
վերջացաւ, նկան գետին ու մեռաւ։

Ա. Բ. Ա. Դ. Ա. Դ.

Դու ինձ ասա, աքաղաղ,
Ուկէ կատարիդ մատաղ,
Կարմիր միրուքիդ մատաղ,
Ինչի ես շուտ արթնանում,
Բարձր-բարձր երգ ասում,
Քաղցր քունս խանգարում։



ԴԱՍԱՏԱՆ

Դասատան մէջ նըստած են աշակերտները։ Աշակերտ-
ների առաջ նըստած կամ կանգնած է վարժապետը։
Վարժապետը սովորեցնումէ։ Աշակերտները սովորում են։
Երբոր վարժապետը ներս է մըտնում, աշակերտները ոտի
են կանգնում եւ աղօթում են. յետոյ նըրանք նըստում՝
դասով են պարապում։ Աշակերտները դասատանը կար-
գում են, գըրում են, հաշում են թուերով, երբեմն էլ
նըլարում են։ Աշակերտների դիմացը դրած է մի մեծ
դրատախտակ։ Գրատախտակի մօտ դրած է կափճ եւ
սպոնգ։ Գրատեղանների վրայ դրած են դասական
առարկաներ՝ գիրք, տետրակ, քարետախտակ. . . Քարե-
տախտակի վրայ գրում են քարեգըրչով։

Ով է նըստած դասատան մէջ։ Ո՞վ է կանգնած աշակերտների
առաջ։ — Ի՞նչ է անում վարժապետը։ — Ի՞նչ են անում աշակերտները։
— Ի՞նչով են պարապում աշակերտները։ — Ի՞նչ կայ դրած աշակերտ-
ների դիմացը։ — Ի՞նչով են գրում գրատախտակի վրայ։ — Ի՞նչ կայ
դրած գրատեղանների վրայ։ — Ի՞նչով են գրում քարետախտակի վրայ։

ԸԳԱՀ ՇՈՒՆ

Մի շուն կար։ Մի օր այս շունը՝ մի կըտոր
միս բերանին, պիտի անց կենար կամուր-
ջով։ Անց կենալիս՝ ցած նայեց ջըրին և տե-
սաւ, որ մի ուրիշ շուն գընում է ջրի միջով՝
բերանին բռնած մի մեծ մսի կըտոր։ Նան

ագահութիւնը շարժուեցաւ. Նա կը լանչեց ու
ցած թը ըստ կամուրջից և կամեցաւ միւսի
ձեռքից խըլել մսի կը տորը:

Բայց ի՞նչ. ցած թուչելիս իր բերանի
կը տորն էլ վեր զցեց՝ ջուրը տարաւ. Ջրի
մէջն էլ ոչ շուն զըտաւ, ոչ մըսի կը տոր.
Կենդանին խաբուել էր իր ստուերից: Ագա-
հութիւնը զրբկեց նըրան իր ունեցածից:

2. ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԽՍԵԼԻՔ

Ու տելիք՝ հաց, արգանակ, սպաս, փլաւ, խո-
րոված, մածուն, իւղ, սեր, գաթայ, բաղարջ. . .
Խմելիք՝ ջուր, թէյ, սուրճ, գինի, գարեջուր,
կաթ. . .

Հացն սուրելիք է: Զուրը խմելիք է: Գլուխը. գլուխակը.
Գլուխան. իանը. նատիունը. նաժունը. սուրճը. սէրը. գարեջը-
րելիք. հուլը. գլուխահարը. գլուխը. գինին. խորովածը. գա-
րեջուրը. արգանակը. . .

Առածներ.—Հացն ուտելով, բանն անելով.—Աղ ու
հաց, սիրտը բաց.—Հաց ու պանիր, կեր ու բանիր.—Կուշ-
ու սովածին մանր կը բրդի:—Մի բաժակ ջուր, ով ուզի տուր:

Հանելուկներ:—1. Ճերմակ տակառիկ, մէջը երկու կերպ
ըմպելիք:—Օրան օրան շուր. և զալիս, ոտներ ջ'ունի, ման և
զալիս, բերան ջ'ունի, կուլ և տալիս:

Գ Ա. Ռ Ն Ո Ւ Կ.

Սիրուն, անմեղ իմ գառնուկ,
Բուրդը սպիտակ ու փափուկ,
Դաշտ վազելով ու արօտ,
Մօրդ քաշում ես կարօտ.
Մի լար, գառնուկ միրական,
Փոքրիկ տըղի դու նման,
Կըգայ մայրը, հետը շատ
Կըբերէ քեղ անուշ կաթ:

Հ Ա. Յ Ե Ւ Զ Ո Ւ Ր.

I.

Մարդուս գլխաւոր ուտելիքը հացն է: Հացը պատ-
րաստում են ալիւրից: Առաջ ալիւրը մաղում են, յետոյ
տաք ջրով շաղախում խրմոր են շինում: Խրմորը շա-
ղախելիս՝ հետը թըթ-խմոր են խառնում: Թըթ-խմորին
ասում են խաշ: Նաղախած խրմորը լաւ հոնցում են եւ
ծածկում: Հոնցած խրմորը քիչ-քիչ քացախում է տաշտի
մէջ—գալիս է: Տանտիկինը վերցնում է եկած խմորը,
գընդում է եւ այդ գումդերից հաց է թխում թոնդրի
կամ հընոցի մէջ: Հընոցին վուռ են ասում:

II.

Ջուրը մարդիկ չեն պատրաստում: Նա այնքան հար-
կաւոր է, որ Ասուտած ինքը առաստութեամբ բաշխում
է հարուստին էլ, աղքատին էլ: Մարդիկ խմելու ջուրը
վեր են առնում աղքիւրներից ու գետերից: Ուր որ աղ-
քիւր կամ գետ չըկայ, մարդիկ գետինը խոր քանդում են,
ջըրհոր են շինում եւ այդ ջըրհորի ջուրն են խմում: Ա-
ռանց ջրի մարդը չի կարող ապրիլ. կենդանիներն
էլ կըկոտորուին, եթէ ջուր չըլինի:

Մեր հայր, որ երկրնքումն ես, սուրբ լինի քո անոնք, գայ քո թագաւորութիւնը, լինի քո կամքը երկրի վըրայ էլ, ինչպէս երկրնքումն է. մեր ամենօրեայ հացը այսօր էլ տուր մեզ, ների՞ր մեզ մեր պարտքերը, ինչպէս որ մենք ներում ենք մեր պարտապան-ներինը, մեզ փորձանքի մի տանիք, այլ ազատիք մեզ չարից, որովհետեւ քոնն է թագաւորութիւնը, զօրութիւնը եւ փառքը այժմ եւ յախտեան:

ԷՇԸ ԵՒ ՇԹԻՆԸ.

Էշը բարեկամացաւ շանը և խընդրեց, որ իր հետ ճանապարհորդելու գնայ: Շունը համաձայնեցաւ: Նատ գընացին թէ քիչ՝ երկու ընկերները մի խոտաւէտ տեղ կանգնեցին, որ հանգըստանան: Երկուսն էլ յոգնած էին, երկուսն էլ սոված: Էշն սկսեց ախորժակով արածել կանաչ խոտը: Շունը ուտելու բան չ'ունէր:

— Ըսկե՛ր ջան, խուրջինումըդ բաւական հաց կայ, ասեց նա էշին. տո՛ւր ինձ մի կըսոր հաց, սոված մեռնում եմ:

«Խոտ շատ կայ այստեղ, կե՛ր դու էլ

ինձ պէս, ասաց էշը քըմ-ծիծաղ տալով. հացը ես ուրիշների համար եմ պահում»:

Շունը հոտոտեց խոտը, պոկեց միքանի հատ, ծամեց ծամծըմեց ու բերանից վէր ածեց:

— Ես խոտ չեմ կարող ուտել, է՛շ բարեկամ, ասաց շունը. այդ կերակրին ես սովոր չեմ. աղաչում եմ՝ մի պատառ հաց տուր, անօթի եմ:

Էշն այս անգամ ականջ էլ չըդրեց շան աղաչանքին. նա աջ ու ձախ հընձում էր անուշ խոտը և ուտում:



Ոյդ միջոցին՝ որտեղից որ էր, հեռու թփերի տակից երկեցաւ գայլը — ի՞ի թըշնամին. նա կատաղութեամբ դուրս վազեց անտառից, բայց երբ տեսաւ շանը, կանգնեց, դունչը երկարացրեց և տըխուր ձայնով օռնաց:

Էշը զարհուրեցաւ. «Ի՞ մ սիրելի, իմ պատուական ընկեր, ասաց նա. ահա քեզ բոլը հացը, կե՛ր, անուշ արա, միայն-թէ ազատիր ինձ չար գազանի ատամներից»:

Շունը երեսը շուռ տուեց:—Դու արժանի չես, որ ես քո հացի պոռանգը կտրեմ, ասաց նա. Քաղցածութիւնն ինձ չի սպանիլ, ես կը մըտնեմ անտառը, կերակուր կը գրանեմ, դու էլ՝ եթէ կարող ես, քո գրլխիդ ճարը տես:

Ասաց ու հեռացաւ շունը: Մի ակրնթարթի մէջ գայլը պատառուեց էշին:

Ո՞նչարազատ ընկերը սաստիկ պատժուեցաւ իր վարմունքի համար:



Յ. ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ, ՆԱԽԵՐ, ԿՍՈՔԵՐ.

Նինութիւններ՝ եկեղեցի, ուսումնարան, տուն, պալատ, խրճիթ, գոմ, կալ, ջրաղաց . . . :

Նաւեր՝ մակոյկ, նաւակ, շոգենաւ, առագաստանաւ:

Կառքեր՝ սայլ, սայլակ, սահնակ, կառք, շոգեկառք, համրակառք:

Տունը շինութիւնն է: Մակոյկը նուն է: Տեղբանիը դաստիան առարկայ, է: Փլանը. սահնակը. գրանհատը. եկեղեցին. շոգենաւը. ամբարը. նեյշը. խորութեալը. առագաստանաւը. գոմը. ջրաղացը. սայլը. գրանհատակը. համրակառքը. տարեդատակը. պալատը. սուրճը. խճինը . . . :

Առած:—Մինչև սայլը շուռ չի անցնիլ ճամբէն չի դըստուիլ:

Հանելուկներ. — 1. Անջուր ջաղաց, անկրակ բաղարչ: 2. Զորս եղբայր կան՝ միմեանց յետեւից վազում են, բայց իբրար չեն հասնում:

ՏՈՒՆ.

Մեր տունը մեծ չէ. նա երեք սենեակ ունի եւ մի խոհանոց: Սենեակներից մէկում ես ու եղբայրս սովորում ենք մեր գասերը: Երկրորդ սենեակում մենք ճաշում ենք: Նրա մէջ գարսած են շատ աթոռներ, մէ մեծ սեղան եւ մի պահարան: Ամենից մեծ սենեակում մենք քնում ենք. դա կոչվում է ննջարան:

Մեր տան բակը շատ մեծ է։ Բակի աջ կողմը մի փոքրիկ պարտէղ կայ, իսկ ձախ կողմը շինած է գոմը։ Բագումն է լինում մեր տան հաւատարիմ պահապանը—շոնը։

Ի՞նչպիսի տուն ունիք դուք։
Քմնի սենեակ ունի ձեր տունը։
Ո՞ր սենեակի մէջ թնչ էք անում։
Ի՞նչ կայ շարուած սենեակների մէջ։
Ի՞նչպիսի բակ ունի ձեր տունը։
Ի՞նչ կայ շինած բակի այս ու այն կողմը։
Ո՞գ է պահպանում տունը։





Փ Ի Ս Օ.

Կատուն եկաւ՝ փիսիկ-փիսիկ,
Հազար նազով, ինչպէս հարսիկ։
Դունչը սրբեց թաթիկներով,
Մազը սանրեց չանչիկներով։
—Կատու—կատու, էր ես տըրտում։
Թէ մկներն են այսօր արթուն։

ԿԱՏՈՒ.

Մի չար կատու կար. նա խեղդում էր ձեռն ընկած մուկը և սաստիկ նեղն էր զցում նրանց։ Մկներն էլ յիմար չեին. Նրանք շուտով ճանաչեցին իրանց թշնամուն և աշխատում էին թագչիլ նրանից. Երբ որ կատուն տանն էր՝ բնիցը դուրս չեին գալիս։ Բայց փիսօն խորամանկ էլ էր. նա գնաց ամբարը, ալրի մէջ թաթախուեցաւ և այդպէս սպիտակած՝ մտաւ հացի տաշտը և մի անկիւնում կուճ եկաւ։ Երկար ժամանակ կատուի ձայնը չէր լսվում։ Մըկները կարծեցին թէ նա սատկել է, դուրս եկան ծակերից և սկսեցին ուտելու բան որոնել։ Մէկ մուկը մօտեցաւ հացի տաշտին, նայեց տեսաւ մի սպիտակ բան։ «Լաւ է, ասաց նա, այստեղ համ հաց կայ, համ պանիր»։ Ասաց ու մօտ վագեց պանիրին։ Պանիրն էլ մեր ալրակուր կատուն էր. թաթը մեկնեց և տեղն ու տեղը խեղդեց մըկանը։ Յետոյ եկաւ երկ-բորդը, եր-բորդը, չոր-բորդը. իսկ մեր փիսօն ամենքին էլ

խեղդոտեց: Վերջապէս մօտ եկաւ մի ծեր
ու վորձուած մուկը, կանգնեց տաշտի շըր-
թունքին և զգոյշ նայեց սպիսակ բանին.
յետոյ ճանաչեց նրան ու ասաց. «Էյ բա-
րեկամ, քո սպիտականալը մի գրօշ չ'աժէ
աչքում։ Ճանաչեցի՞, մլաւան կատուն ես,
գոյնդ-ես փոխել, հոգիդ միեւնոյն է։ Ա-
սաց ու փախաւ, ընկերներին իմացրեց։



Կ. ԳՈՐԾԻՔ ԵՒ ՍԱՐՔ.

Գործիք՝ դանակ, գդալ, պատառաքաղ, ասեղ,
մլրատ, կացին, մուրճ, սղոց, արօր, գերանդի, ման-
գաղ, թի, բահ, թուր, դուր, ուրագ . . . :

Սարք՝ սանձ, թամբ, փոքքաշ, ասպանդակ, կապ,
կրծակալ, թիկնափոկ։

Դանակը գործիք է։ Սանձը սարք է։ Սայլը հաստ է։
Արօրը էաբը. ըամբը. մանդաղը. սղոցը. գործաշը. բահը.
ա-բահը. իրժակալը. հիւտուրը. ենդեցին. ուրագաւագը.
դերտը. սղոցը. հայլ . . . :

Առածներ. — Բզե գլխին բռունցքով տալ չենիլ. — Ա-
րագն իր կոթը չե տաշել.

Հանելուկներ. — 1. Տապանը փայտ է, մեռեն երկար է.
երբոր ճայն կըտայ, աշխարհ կըբնդայ։ 2. — Փտած փայտը
փորեցին, առ-խածը մեջը բաղեցին։

Բ Ա. Գ Ի Կ.

«Բաղիկ—բաղիկ,
Կարմիր թաթիկ,

Ուր ես գընում կամաց-կամաց,
Զագուկներդ չորս կողմեր առած»։

— Ես գնում եմ ջուր գըտնելու,
Զագուկները լուսնալու.
Զագուկները մաքուր մաքուր.
Տըղոց երեսն աղտ է ու մուր։

ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԸ.

Ես մի փոքրիկ երեխայ եմ: Ես ունիմ հայր ու մայր: Հայրս ու մայրս ինձ շատ են սիրում: Ես երկու քոյր եւ մի եղբայր էլ ունիմ: Ծնողքս նրանց էլ են շատ սիրում: Հայրս ու մայրս մեզ կերակրում են. նրանք մեզ ուտելիք ու հագնելիք են տալիս. նրանք մեզ պահում, պահպանում են: Մենք շատ ենք սիրում մեր ծընդներին եւ նրանց համար աղօթք ենք անում:

Ա.ՌԱԽՈՏԵԱՆ Ա.ՂՕԹՔ.

«Փառք ստեղծողիս, որ քուն անուշիկ
Տուաւ իմ աչքիս, արթնացրեց հիմիկ.
Ծագեց իմ վերայ սիրունիկ արեւ,
Մայրիկս տուաւ ինձ քաղցրիկ բարեւ.
Հայրըս համբուրեց, առաւ ինձ գիրկը,
Ինչպէս որ հովիւ-փոքրիկ գառնիկը:

«Աստուած իմ եւ Տէր, մինչեւ այս կէտիս
Դու ես պատրաստել իմ ամեն բարիս.
Տուր որ անմեղիկ մնամ մըշտական,
Ետին սերելի, Քեզ հաճոյական»:

ՍԱԳՆ ՈՒ ԲԾԴՐ.

Սագն ու բաղը գնացին լճի ափը, որ
Համ մի փոքր լողանան, Համ էլ ուտելու
բան գտնեն: Լողացան, մաքրուեցան, յե-

տոյ յետ դարձան և սկսեցին իրար հետ
զրոյց անել:

— Բաղիկ, կցեց սագը, տեսնում ես,
ի՞նչ շնորհալի թռչուն եմ ես. ջրումը լու-
ղում եմ, օդումը թռչում, գետնի վրայ էլ
ման եմ գալիս. ասա խնդրեմ, ինձ նման
էլ կենդանի կայ աշխարհում. ես բոլոր
թռչունների թագաւորը չեմ:

«Ես էլ հեսց դրա վրայ էի մտածում,
ընկերս, պատասխանեց բաղը. կասկած չը-
կայ, որ դու շատ շնորհալի թռչուն ես. բայց
ես էլ քեզանից պակաս չեմ. տես թէ ի՞նչ-
պէս եմ սուրուր տալիս ջրի երեսին, խա-
ղում փրփրուն ալիքների հետ, ի՞նչպէս
եմ մտնում ջրի տակը, մանրիկ ձկներ
ու ձիձուներ բռնում, նորից դուրս գալիս,
ուռչում, փրփում թագուհու պէս: Հա, Հա,
ընկերս, մեզ շատ զարմանալի թռչուն ենք.
մեզ նման շնորհըով կենդանի չըկայ աշ-
խարհում:

Լճի ափին՝ ծառի վրայ վէր էր եկել
ազուաւը և ականջ էր գնում դրանց: Երբ
որ բաղը խօսքը վերջացրեց, ազուաւը կան-

չեց. «Այ միամիտ թուշուններ, ինչի՞ էք
հպարտանում: Կարող ես դու, սապիկ,
շան պէս արագ վազել»:

—Ո՛չ, պատասխանեց սազը:


«Իսկ դու, բաղիկ, ծիծեռնակի պէս
թոչիլ կարող ես»:

—Զեմ կարող, ասեց բազը:

«Իսկ ո՞րը ձեզանից կարող է լող տալ ձը-
կան նման»:

Սագն ու բազը գլխները կախ գը-
ցեցին:

—Ուրեմն էլ ինչի՞ էք հպարտանում: Ես
կարծում եմ, ընկերներ, որ աւելի լաւ է,
երբ մարդս մի բան զիտէ ու հիմնաւոր,
քան թէ շատ բան ու բոլորն էլ թերի:



5. ԿԱՐԱՍԻՔ ԵՒ ԱՄԱՆՆԵՐ.

Կարասիք սեղան, աթոռ, բազկաթոռ, գահատրակ,
բազմոց, մահճակալ, օրօրոց, պահարան, գզրոց, նըս-
տարան:

Ամանն եր գաւաթ, ափսէ, բաժակ, կուժ, կու-
լայ, հեշտաեռ, կաթսայ, թաւայ, շիշ, սրուակ, պնակ:

Առածներ:—Այ կուժ, քեզ ասեմ: այ կուլայ, դու ի-
մացիր:—Մի բաժակ ջուր, ով ուզե տուր:—Կուժը ջրի ձա-
նապարհին կըկոտրի: Աւելորդ կահ-կարասիք՝ պատճառ է
շատ վլասի:

Հանելուկներ:—1. Չորս եղբայր մեկ զդակի տակ:

2. Վերելից երդիկ, ներքենից դոնակ,
մեջ տեղումը ջուր ու կրակ:

Աւղանը կարտակիւ է: Գառանը աման է: Ա. փաէն. բաղ-
իւնաւուը. գահաւուկը. արաւուկը. բաժակը. արօրը. կունան.
դաւունը. առյուն. օրօրուցը. շեշը. հալուցը. արդանակը. գնդա-
կը. նաւարանը. գինին. աւարտիւ. գրւահարը. դանաւուը. դա-
նակը. շանենաւուը. շագենաւուը. նեշտանաւուը. նեյը. գանան.

ԱԹՈՌ ԵՒ ԳԱԽԱԹ.

Աթոռը շինում են վայտից: Աթոռն ունի չորս
սոր, նստելատեղ եւ թիկունք: Նստելատեղը հիւսած-
է ծզօտից: Նա տախտակից կամ վափուկ կտորից էլ է
լինում: Աթոռ շինողին ատաղձագործ են ասում:

Գաւաթը շինում են կափց: Կաւը բարակ մաղում
են, շաղախում, հոնցում եւ ուզած ձեւը տալիս: Նա-
դախը ցամաքում է: Ցամաքած գաւաթները դնում են
հնոցի մէջ եւ սաստիկ կրակ են վառում տակը: Տաքու-
թիւնից կաւը կարծրանում է: Գաւաթ շինողին բրուտ
են ասում:

Ա. Բ Ե Ւ.




«Արեւ—արեւ, դուքս արի,
Քեզ բերել ենք աչքալոյս.
Քո քուրիկը՝ լուսինկան,
Բերաւ չամիչ մէկ աման.
Սմկը եկաւ—մուժ արաւ,
Չամիչն աչքերէս կորաւ,
Բաց երեսրդ, արեգակ,
Մէկ բուռ չամիչ քեզ կըտանք»:
— Օ՛յս, արեւին խարեցինք,
Սմախ տակից հանեցինք:

ՀԱԻՐ ԵՒ ՎԱՌԻԿՆԵՐԸ:

Հաւը վառիկներն առաւ ու գնաց քը-
ջուջ անելու: Քջուջ անելիս՝ մայրը նկա-
տեց, որ ուրուրը պտըտում է երկնքում և
նայում է վառիկներին: Մայրը ձայն տուեց.
վառիկները հասկացան՝ որ վտանգ կայ, վա-

զեցին մտան մօր թեերի տակ: Ցինը եր-
կար պտըտեց և էլ վառիկ չըտեսնելով՝
հեռացաւ գնաց: Հաւը բաց արեց թեերը.
վառիկները նորից սկսեցին վազվզել, խա-
ղալ: Անցկացաւ մի քանի րոպէ. սրատես
ուրուրը հեռուից նկատեց ձագերը և դէ-
պի նրանց թուաւ: Հաւն էլ քնած չէր. նա
բարձր ձայնով կանչեց իր ձագերին: Վա-
զեցին ձագերից շատերը, մտան իրանց մօր
թեի տակը. բայց մի երկու վառիկ ականջ
չարին իրանց մօր ձայնին. նրանք կարծե-
ցին, թէ ուրուրն իրանց վնաս չի տալ, այլ
առաջուայ պէս կ'անցնի—կ'երթայ. բայց ու-
խալուեցան: Ցինը նետի պէս ցած իջաւ և
նրանցից մինին ու միւսին ճանկերի մէջ
առաւ տարաւ: Ազատուեցան միայն նրանք,
որոնք մօր խօսրը լսել և նրա թեերի տա-
կըն էին մտել:





6. ԿԵՆԴԱՆԻՆԵՐ.

Զ որքոտանի կենդանիներ՝ ձի, կով, ոչխար, գայլ, արջ, կատու, շուն, փիղ, առիւծ. . . :

Թոչուններ՝ ծիծեռնակ, սոխակ, հաւ, բադ, սագ, հնդուհաւ, արծիւ, ցին, բու. . . :

Զ կներ՝ կարմրախայտ, իշխան, կողակ, գեղարքունի, տառեխ, օրագուլ, կապուտ. . . :

Սոզուններ՝ օձ, մողէս, գորտ, կրիայ. . . :

Միջատներ՝ մեղու, ճանճ, մոծակ, մրջիւն, մորեխ, բղեղ, կարիճ, թիժեռ. . . :

Զին ընդունի իւնդանի է, էսէ օ՞չը: Մողէսը սողունի, էսէ մեղուն: Նապատագա՞կը. ճընճլունէը. մորէիը. սպա՞ն. գէղարտունէն. էսէ լը. էսէ լը. նիւնւնէնէն. օրագուլը. արա՞տը. ճըջէ՞նը. իւնդան: Ի՞նչ բան է գրադարականէն. հրառեկանը. հուլը. սոսորնը. պանիը. մահմականը. բաժակը. . . :

Առածներ.—Շան հետ ընկերացիր, փայտը ձեռիցդ մի գցիր.—Գայլի գլխին աւետարան էին կարդում: ասում էր՝ շուտ արէք, ոչխարը սարեց անցկացաւ:—Գայլի անունն է կոտրած, աղուէսը աշխարհ քանդեց:—Աղուէսի դունչը խաղողին չըհասաւ, ասեց իսակ է:

Հանելուկներ:—Քարք քարի վրայ՝ քար չէ, արածում է, տառար չէ, ճու է ածում, իսա չէ:—2. Անջունաց, անկրակ բաղարչ:



ԵՐԿՈՒ Ա.Ք.Ս.Ղ.Ա.Ղ.

Երկու աքաղաղ կոռւեցին եւ մինը յաղթեց միւսին: Նա՝ որ յաղթուեցաւ, փախաւ սրահի տակը մնաւ. իսկ նա՝ որ յաղթեց, բարձրացաւ կոռւը եւ հպարտ-հպարտ «ծուղուղու» կանչեց: Այդ բուկին արծիւը թուղում էր վերեւից. նա տեսաւ հպարտացող աքաղաղին, յափշտակեց նրան ու տարաւ, անուշ արաւ:

ՊԱՌԱԽՆ ՈՒ ԱՅԾԸ.

(Մանկական երգ)

Կար յրկար երբեմըն

Աղքատ մի պառիկ,

Ունէր մեր պառաւը

Կաթնատու այծիկ,

Չալիկ-մալիկ

Կաթնատու այծիկ:

Պառաւը ձրմեռը

Այծիկը պահեց,

Իր բերնի պատառը,

Նըրա հետ կիսեց,

Սիրով—յօժար

Նըրա հետ կիսեց:

Երբ ձինը հալուեցաւ,

Բըսաւ կանաչ խոտ,

Պառաւը այծիկը

Դոկս տարաւ արօստ,

Ուրախ—զուարիթ

Դուրս տարաւ արօստ:

Յանկարծ վրչեց քամին,

Մըթնեց երկինքը,

Թանձըր մառախուղը
Պատեց գետինքը,
Վայ-վայ, վայ-վայ
Պատեց գետինքը:
Պառաւը խիստ տըխրեց.
Գայլն ուրախացաւ,
Այծի անուշ մըսով
Փորին դեղ արաւ,

Կերաւ-լափեց,
Փորին դեղ արաւ:
Պառաւը կանգնած էր
Փունջ խոտը ձեռին,
Անմխիթար ձայնով
Կանչում էր այծին.
«Եկ-եկ, եկ-եկ»,
Կանչում էր այծին:

ՕՉԸ

Զմեոն էր: Գիւղացին անտառ գնաց՝
փայտ կտրելու: Փայտ կտրելիս՝ նա տեսաւ մի օձ, որ ցրտից սառել, փէտացել էր:
Բարի գիւղացին խղճաց օձին, վերցրեց,
դրեց կրակի մօտ, որ տաքանայ: Օձը տաքացաւ թէ չէ վրայ վագեց, որ կծէ գիւղացուն:

«Ո՞վ ապերաթոտ, ասեց մարդը. իմ լատութիւնը դրանով ես վճարում»: Այս ասեց ու կացնի քիւփով խփեց, գլուխը ջախչախեց:



ՆԱՊԱՍՏԱԿ.

Մի վազիր այդչափ արագ,
Իմ սիրոնիկ նապաստակ,
Նաս պատիկ ես տակաւին,
Թաթիկներսդ կըյոգնին:

Քեղ կըբերեմ կաթն ու հաց,
Նաքրաֆլրով համեմած,
Ուտես, խըմես, զօրանաս,
Բանից կարօտ չըմինաս:
Ծանրը-ծանըր կըքայես,
Սիրովս վեր-վեր կըհանես,
Կ'արձակեմ քեղ, երբ ուզես,
Կ'երթաս, ազաս կ'արածես:

7. ԲՈՅԱՐԸ

Ծառեր՝ հայի, կալնի, լորենի, խնձորենի, տանձենի, ընկուզենի, թղենի, թթենի. . .
Թփեր՝ մորենի, վարդենի, մոշի, մասրի. . .
Բանջարեղեն՝ սիսեռ, լոբի, սոխ, բողի. . .



Հացաբոյսեր՝ ցորեն, գարի, վարսակ, կորեկ, հաճար, բրինձ. . . :

Խ ո տ ե ր՝ անանուխ, ռեհան, եղինջ, թրթնջովկ, աւելուկ. . . :

Ծ ա զ ի կ ն ե ր՝ մանուշակ, շուշան, յասմիկ, նարդէս, շահոքրամ, քրքում. . . :

Ս ս ւ ն կ ե ր՝ կարմրասոկոն, ոչխարասոկոն, գայլասոկոն, անտառասոկոն. . . :

Առածներ. — Ծառն արմատից կը ըրանայ: — Պտղատու ծառը գյոււկը կախ կը դաշի: — Մի ծաղկով գարունք չի լինի: Բարի ծառը բարի պտուղ կը բերի. չար ծառը չար պտուղ կը տայ: — Ամեն ծառ իր պտղիցը կը ճանաչուի:

Հանելուկներ: — 1. Է աս կանաց կոճակ կոյոր, մաքուր հիւրով լցուած տկար, կարմիր մեղուր ներսը բոյոր, եղբայր, դու կեր իբր մեղրի ծոր: — 2. Բունեմ ափովս, շաղ տամ բարովս, մեռնի տարով, ապրի բարով: — 3. Ո սկէ կճումիկ, միջուկն անուշիկ:

Խաչորչնին ծառ է, էսէ վարչունին նո՞-է է: Ան անսունը խոտ է, էսէ սկսեւը. ցորչնը. հարդարիւնը. հաղնին. մարչնին. լոբին. գալին. ընկուղնին. ճակնդեղը. սաղնիը. բրնձնիը. կաղամբը. իւռաւուը. իւրինը. վարսոնդը. իւրմասսունը. սիւնեւը. մանուշակն. շահոքրամը. աւելունը. վարդակն. նընըն-զունը. գրինը. հանուգրամը. եւհանը. բաղնիը. աւելունը. շուշանը. . .

Աղուէսը վայրենի կենդանի է. նա միս է ուստամ: ճագարն էլ վայրենի կենդանի է, բայց խոտ է ուստամ: ճագարը գետնի տակ խորը ծակում է, իրան համար որջ է շինում. բայց որջը փոքր է լինում ունեղ, էնդուր որ ինքն էլ փոքր է:

Աղուէսը ճագարին թշնամի է:

Մի անգամ աղուէսը մօտենում է ճագարի որջին եւ ասում է. «Ճագար, ինչի՞ ես խոր փոսի մէջ պահուել. դուքս արի այդ մուժը ծակից, արածիր պայծառ արեւի տակ!»

— Ենորհակալ եմ, պատասխանում է ճագարը. երբոր այդտեղից կը հեռանաս, խրատդ. կը լսեմ ունդուրսկը գամ: Բայց քանի որ այդտեղ եռ. հանգիստ կը լսեմ ընիս մէջ. քեզպէսների բարեկամութիւնից ես միշտ փախչում եմ:

ՄԱՆՈՒՇԱԿ. զուզու ծանր ունի ։

Կապոյտ գըլխով, կանաչ ոսով,
Ես ծաղիկ եմ անուշ հոտով.
Թէեւ տունկը փոքրիկ է՝ ցած,
Արօտներում միշտ թագկացած,
Բայց իմ փունջը ամենի տան՝
Թէ աղքատի, թէ մեծատան,
Իբրեւ գարնան առաջի զարդ,
Կարէ տեմնել ամեն մի մարդ:
Ես եմ սիրուն գարնան գուշակ.
Իմ անունը է՝ մանուշակ:

Գիւղացին երկու օրավար հող ունէր: Մի օրավարում նա ցորեն ցանեց, միւսում՝ գարի: Արտերն աճեցին, բարձրացան, հակեր զցեցին: Մի օր գարին սկսեց խօսիլ. «Ցորեն եղբայր, ասաց նա, վատ տեղ է ցանել մեզ մեր տէրը. այս գիւղը շատ աղքատիկ է — ոչ ուսկի ունի, ոչ արծաթ. ով պէտք է մեր յարզը ճանաչէ, մեզ գին տայ: Արի, ցորեն եղբայր, թողենք, չեւանանք այս գիւղից. արի գնանք այստեղ, ուր ուկի շատ կայ:»

Ցորենը լսեց զրացու խօսքերը և ասեց. «Եատ ափսոսում եմ, գարի եղբայր, որ միայն քիստդ ես երկարացրել, խկ խելք կարծ է մնացել. ինչի՞ մենք ման գանք ոսկու յետելից. մեր արժէքն այնքան մեծ է, որ ոսկին ինքն իրան մեր դուռը կը զայ»:

Ա. Ն Զ Ր Ե Ի.

Անձր Եւանձրեւ, ցած արի,
Բըսցուր ցորեն ու գարի,

Բըսցուր ծաղիկ, կանաչ խոտ,
Ավել փոշի, մաքրէ օդ:
Անձրեւանձրեւ, ցած արի,
Դալդ ամենուս բարի:

8. ՀԱՆՔԵՐ.

Թանկագին մետալներ՝ ոսկի, պլատին, արծաթ...:

Հասարակ մետալներ՝ երկաթ, պղինձ, արծիճ, կլայեկ...:

Թանկագին քարեր՝ աղամանդ, զմրուխտ, յակինթ...:

Հասարակ քարեր՝ ործաքար, չէչաքար, աւազաքար...:

Հողեր՝ սեւահող, աւազահող, կաւ, կիր, գաջ...:

Առածներ.—Ապրիլ կայ երկաթ է, ապրիլ կայ արծաթ է.—Առկին փոքր է, բայց գինը մեծ է:

Հանելուկներ:—1. Երկու եղբայր խիստ որոնուած, երկուսն էլ մեկ մօրից ծնուած. մեծի փոքր է պատիւն ու զին, փոքրը՝ յարգի եւ բանկագին:

Ի՞նչ է առաջ վարժադեպը. աղոխէրու. +ահանա՞ն.
հայութէրծը. վաճառակա՞նը. հովի՞նը. սրամէրու. յինէրու.
բրա՞մը. +արտա՞շը. հօշտակա՞նը. յէ՞ն. ի՞ն վը. իապա՞ն.
մեզո՞ն. շո՞նը. . .

Ի՞նչ է առեն. երկա՞նը. արձագա՞նը. ադամա՞ն-
ուը. ի՞ն վը. պլատինը. արմէրծը. զմրու՞մարը. յէլու+մո՞նը.
նո՞րը. արժա՞նը. պոյէ՞նը. ժա՞նը. . .

ՈՍԿԻՆ ԵՒ ԵՐԿԱԹԸ:

Ոսկին ու երկաթը վիճում էին միմեանց հետ:
«Ես ամենից լաւ մետալն եմ, ասում էր ոսկին.
ամենքը գովում են ինձ, պատիւ են տալիս. ամենքը
սիրում են ինձ: Մարդկանց համար ես փող էլ եմ;
զարդարանք էլ. ինձանից ինչ ասես շինում են՝ սիրուն
շղթաներ, թանկագին մանեակներ, մատանիք, քորոց-
ներ . . . Է՛հ, էլ ինչ երկարացնեմ, առանց ինձ մարդու
կեանքը կեանք չէ, այլ տանջանք է: Եթէ ես ուղենամ,
ամբողջ աշխարհը մենակ կլցնեմ»:

Երկաթն ասեց. «Նատ ես պարծենում, ոսկի աղայ:
իրաւունք էլ ունիս. մարդկի քեզ շատ են երես տալիս:
Բայց մենակ դու չես աշխարհի տէրը. երբ մարդս ու-
զում է ապահով ապրել, նրան երկաթ է հարկաւոր.
տուն շինելու համար ոսկէ կայնով չեն կտրում փայ-
տը. հաց ունենալու համար ոսկէ արօրով չեն վարում
հողը. գաղաններից պաշտպանուելու համար ոսկէ հրա-
ցան չեն բանեցնում: Եթէ դու, աղայ ջան, կարող ես
աշխարհ գնել, ես էլ, լաւ գիտենաս, կարող եմ բորբը
ձեռքիցդ խել:

ՈՍԿԻՆ ՈՒ ՄԱՅԻՆ.

—Ի՞նչ ես լալիս, գաղոնուկս:

«Ծիստ ծեծ կերայ՝ մայրիկս»:

—Քեզ ով ծեծեց, արեւիկ:

«Մէկ չար պառաւ, իմ մայրիկ»:

—Ինչի ծեծեց քեզ, գաղոչիկ:

«Ծառի տակն էի, մայրիկ»:

— Խչով ծեծեց, նազանի:
«Հաստ ճիպոտով, իմ նանի»:
— Ո՞րտեղիդ զարկեց, անուշիկ:
«Ոտիկներիս քնքուշիկ»:
— Ինչպէս լացիր, անմեղիկ:
«Մէ, մէ, մէ, մէ, իմ մայրիկ»:

ՈՉՆԻ.

Սաստուած ամեն կենդանու միջոց է
տուել իր անձը պաշտպանելու. զազաննե-
րը ժանիքներով են պաշտպանվում, ընտանի
կենդանիները զօրեղ եղջիւրներով, իսկ փոք-
րիկ ողնին այն ասեղնաձև փշերով, որոնք
ծածկում են նրա մարմինը:

Սոված գայլը մի օր թափառում էր
դաշտումը և ուտելու բան էր որոնում. քա-
նի օր էր նա ոչինչ չէր կերել. խեղճի
փորը վեց-վեց էր անում: Այդ միջոցին
նա տեսաւ մի փոքրիկ կենդանի, որ կա-
մաց-կամաց առաջ էր գալիս: Աա փշոտ
ողնին էր: Գայլը մօտեցաւ նրան: Ող-
նին ոտնուձեռը հաւաքեց, կծկուեցաւ, փը-
շերը ցից արեց: Գայլը դժուարի բռնուե-
ցաւ. նա մտածեց խորամանկութեամբ բանը

գլուխ բերել: «Ոիրուն ողնի, ասեց նա, այդ
ի՞նչ սիրունիկ ոտիկներ, ի՞նչ նազանի դունչ
ունիս, ափսոս միայն, որ զգեստդ փշոտ է.
ի՞նչ կըլինի, ընկերիկ, քնքուշ փորդ դոնէ
չ'ծածկես այդ անպիտան փշերով»:

Ողնին ըթի ծայրը դուրս հանեց և
ասեց. «Հանգիստ թող ինձ, գայլ. գովա-
սանթիդ կարօտ չեմ: Ենորհակալ եմ Աս-
տղծուց, որ մարմինս ծածկել է փշերով:
Եթէ այս փշերը չլինէին, դու ուրիշ լե-
զուով կըխօսէիր չետս»:

9. ԱՅՐԻ.

Մարմնի անդամները՝ գլուխ, պարանոց,
բռնի, ձեռներ, ոտներ:

Գլխի մասերը՝ գագաթ, ծոծրակ, քունք, ճա-
կատ, դէմք:

Ոէ մքի մասերը՝ յօնքեր, աչեր, քիթ, թշեր,
բերան, կզակ:



Առածներ: — Աստուած ձեռք է տուել բան շինելու համար: — Հացն ուտելով՝ բանն անելով: — Բանի անունը տալիս՝ գլխի ցաւը բռնում է: — Ծոյլ մարդու ձեռները միշտ փրկար են ուտում: — Մի ձեռը ծափ չի տալ: — Մարմնու ճրագնաչքն է:

Հանելուկներ: — 1. Մեկը կանգնած խօսում է, երկուսն ականջ են դնում, իսկ երկուսը նայում են: 2. Երկու սենեակ մի սինանի:

Շուտասելուկ: Փոկակապ Յակոբ ապէր, թէ կարսա մի փոկ կապես, ես քեզ կ'ասեմ՝ շնորհրդ շատ, փոկակապ Յակոբ ապէր:

Գլուխը մարմնի մասն է. դեմքը. ալւը. ժամանիլ. ներտանը. գագանը. յեւները. կղակը. արները. ճակառը. յօները. ուն-ները. նշը. պարանցը. +ինը. ալւերը . . . :

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՅԹՔ.

Տէր Աստուած իմ, Տէր բարերար,
Դու պահպանէ ինձ այս գիշեր,
Տուր հօրս եւ մօրս կեանք երկար,
Հանգստուլթիւն ու լաւ օրեր:
Քո սուրբ հրեշտակդ մեր մօտից
Զըհեռանայ ամենեւին,
Սյլ պահէ միշտ փորձանքներից,
Սրբնացնէ զուարթագին:

ՄԵՂՈՒՆ ՈՒ ՃԱՆՃԱԼ.

Ճանճերը գոյչ չեին իրանց կացած տեղից. Նրանք խորհուրդ արին, որ ուրիշ երկիր գնան: Բայց մենակ չեին ուզում գընալ. իրանցից մէկին ուղարկեցին մեղուի մօտ, որ նա էլ գայ:

«Մեղու եղբայր, ասեց ճանճը, չար մարդիկը դադար չեն տալիս մեզ այստեղ. Շերիք չէ, որ ամեն բան ծածկում են մեզանից, լուսամուտներում էլ թոյն են դընում, որ ուտենք ու մեռնինք: Խըճիթներում մեզ չեն նեղացնում մարդիկ, բայց այնտեղ էլ ուրիշ թշնամի ունինք. սարդերը ձգում են իրանց ոստայն-ները, մեր ոտ-

Ները մձը ճում են, մեզ իսեղդում, մեր ա-
րիւնը ծծում: Արի, մեղու եղբայր, գնանք,
հեռանանք այստեղից:

Մեղուն լսեց ու պատասխանեց. «Դուք
գնացէք, ուր որ կամենում էք, ես ձերըն-
կերը չեմ: ինձ համար այստեղ էլ շատ լաւ
է. ամենքը պատվում են ինձ ու սիրում.
Ես էլ ամենքին օգուտ եմ տալիս. իմ մեղ-
ը թէ չար և թէ բարի մարդի, թէ հա-
րուստի և թէ աղքատի ճաշակը բաղցրա-
ցնում է. իմ տուած մոմը Աստծու տա-
ճարն է լուսաւորում: Դուք գնացէք, ուր որ
կամենում էք. միայն գիտենաք, որ ամեն
տեղ էլ ձեզ կը հալածեն, որովհետեւ ոչ ոքի
օգուտ չէք տալիս. բացի օգուտ չ'տալը,
ձանձրացնում էլ էք»:

ՄԵՂՈՒՆ ՈՒ ՃԱՆՃԲ.

ՄԵՂՈՒՆ.

Գարուն, ամառ, ամեն օր
Ես գընում եմ դաշտ ու ձոր,

Աշխատում եմ ես անվերջ,
Մեղը պտրում ծաղկանց մէջ.
Եւ գտարծս ես շիտակ.
Իսկոյն տանում եմ փեթակ.
Որ երբ վչէ ցուրտ քամին,
Ծաղկիկները թառամին,
Ես ձմեռը պաշարով
Լինիմ իսպառ ապահով:

ՃԱՆՃ.

Փոքրիկ ճանճ եմ զուարժանէք,
Միշտ թռչում եմ վայր ու վեր.
Մի հով տան մէջ, մի բակում,
Սաստիկ արեւի տաքում,

Կերուխումից՝ խաղից ջոկ,
Խոկի չ'ունիմ ուրիշ հոգ,
Եւ ներկայով բաւական,
Միտք չեմ բերում ապագան:

ԶԵՐՆԵՐԻ, ԱՅՆԵՐԻ ԵՒ ԲՆԻ ՄԱՍԵՐԸ.

ԶԵՐՆԵՐԻ մասերը՝ գաստակ, արմունկ, ուս:
ՈՄՆԵՐԻ մասերը՝ ազդը, սրունք, գարշա-
պար:

ԲՆԻ մասերը՝ կուրծք, փոր, կողեր, թիկունք,
մէջք:

Դաստիակը յանք ճառ է. աղջրը. ի՞-րժելը. բանը.
Աղա-նիլը. Ական-նիլը. յան-ը. գարշապարը. ի՞րը. . .

Գիրցը դաստիառ աւարկաց է. ջարը գնումակը. աւզանը. կո-
յելը. խորովածը. հայը. հաղապատակը. հապաւն. նընդաւ-իը. վար-
դենին. ինչունին. օյը. գորտը. մածակը. երկանը. ժարը. +արը. . .

ԵՐԿՈՒ ՀՈՎԻԻ.

Պետրոսն ու Կարապետը դաշտից տուն էին գա-
լիս: «Գիտես, Պետրոս, ասեց Կարապետը, եթէ քո ոչ-
խարներից մէկն ինձ տաս, իմ հօտը քոնիցը երեք ան-
գամ շատ կըլինի»:

— Ոչ, պատասխանեց Պետրոսը. աւելի լաւ է դու
քո ոչխարներից մէկն ինձ տուր՝ այն ժամանակ մենք
հաւասար կ'ունենանք:

ԾԱՌՆ ՈՒ ԹԱՐԻՓԲ.

Սնտառի կողքին՝ փոքրիկ բլրի վրայ,
բարձրացել էր մի հսկայ կաղնի: Նրանից
քիչ հեռու՝ շատ մասրի թփեր էին դուրս
եկել: Մի օր կաղնի ծառը զլուխը շարժեց
և ասեց այդ թփերին. «Ի՞նչքան անպէտը
էք և թոյլ, այ ողորմելիներ. ամեն մի մա-
նուկ կարող է ձեզ կտրել—կտրատել, թե-
թեւ քամին էլ ճկում—զետնից է կպցնում
ձեզ. իսկ ես, նայեցէք՝ ողքան մեծ եմ և
յաղթանդամ. ես բանի տեղ չեմ դնում գիւ-

ղացի մանուկներին, չեմ էլ վախենում քա-
մուց ու փոթորկից. ես բոլոր ծառերի
թագաւորն եմ»:

Այս որ ասեց՝ մէկ էլ տեսնես, սաստիկ
փոթորիկ բարձրացաւ, անտառը տարու-
բերուեցաւ քամու առաջ. մասրի թփերը
կռացան, գետնիցը կպան: Հաստարմատ
կաղնի ծառն էլ սկսեց քամու առաջ օրո-
րուիլ. Նրա արմատները ճռճռացին, տրաբ-
տրաբեցին և հպարտ կաղնին ցած ըն-
կաւ, ճղնակտոր եղաւ:

Քամին անցկացաւ: Մասրի թփերը նո-
րից բարձրացրին իրանց գլուխները:
Առաջ. — Ով ոք փքանայ, շուտով չքանայ.
«ՍՈՒՐԲ ԾԱՌ».

Քրոջ խնդրուածքը.

Ելնեմ ծառը զարդարեմ,
Վէր գամ տակը մխիթարեմ:
Հաւի վառիկը մորթեմ,
Տանեմ գետը լուանամ,
Եփեմ ու չոբանին տամ:
Չորանն ինձ մի ոչխար տայ,
Ոչխարն Աստուծուն տամ,
Աստուած ինձ մէկ եղբայր տայ:

Եղբայր, եղբայր, ջան եղբայր,
Զանս քեզ մասաղ, եղբայր,
Կարայ եմ կարել, կարձ է եկել,
Բուզմայ եմ շարել, խոչ է եկել,
Ճընձ-դուկի լեզուն մեղրով
Քեզ համար եմ տապակել:

Առած: — Քըրն ասեց եղբայր ունիմ: Եղբայրն ասեց
Քըր չունիմ:

ՈՒԼԵՄՆ ՈՒ ԳԱՅԼ.՝

Կինում է, չի լինում մի այժ: Այս այծն անտառումն իրան համար տուն է շինում եւ իր զաւակների — փոքրիկ ուկերի հետ բնակվում է նրան մէջ: Ամեն առաւօտ մայրը գուրս է գնում արածելու: Գնալուց առաջ նա ասում է իր ձագերին. «Ո՛րդիք, գունեռը փակեցէք, հանգիստ կացէք եւ եթէ գրսից մարդ գալու լինի, գուռը բաց չ'անէք»: Ասում է ու գնում: Դաշտումը լաւ արածելուց, կուրծը կաթնով լցնելուց յետոյ, այծը տուն է գալիս: Տան գունեռը փակ են: Նա պոզերով գուռը ծեծում է ու կանչում:

«Չալիկ-մալիկ ուկիկներ,
Չալ-պտուրիկ այծիկներ,
Ելէք բացէք տան դուռը,
Պատրաստ է ձեր ապուրը»:

Ուկերը բաց են անում գուռը: Մայրը ծիծ է տալիս նրանց եւ կրկնու գնում է արածելու:

Այս ամենը տեսնում ու լսում է գայլը. Նա մըտքումը գնում է, որ խարելով ներս մտնէ ուկերի փարախը, երբ մայրն այնտեղ լըլինի: Մի օր, երբ այծը գուրսն է լինում, գայլը կամաց-կամայ գալիս է, թաթով գուանը խփում է ու կանչում:

Չալիկ-մալիկ ուկիկներ,

Չալ-պտուրիկ այծիկներ,

Ելէք բացէք տան դուռը,

Պատրաստ է ձեր ապուրը»:

Ուկերը մի լաւ ականջ են գնում: Նրանք հասկանում են որ գուռը թխկթխկացնողն իրանց մայրը չէ եւ պատասխանում են. «Դու մեր մայրը չես, կրտիր հեռացիր այդտեղից. մեր մայրը բարակ ձայնով ու քաղցր է մկում, գուռն էլ պոզերով է ծեծում»: Ասում են ու գուռը բաց չեն անում: Գայլը թողում հեռանում է: Փոքը ժամանակից յետոյ գալիս է մայրը. Նա գովում է ուկերին, որ գուռը բաց չեն արել: — «Դոք շատ լաւ էք արել, որդիք, որ գուռը բաց չէք արել, թէ չէ նա ձեզ ամենիդ էլ կ'ուտէր:

11. ԱԶՔԻ, ԲԵՐԱՆԻ, ԴԱՍՏԱԿԻ ԵՒ ԳԱՐԾԱՊԱՐԻ ՄԱՍԵՐԸ.

Աչքի մաս երը՝ բիք, ծիածան, սպիտակուց,
կոպեր, արտեւանունք:

Ի երանի մաս երը՝ շրթոնք, ծնօտներ, լընդեր,
ասոաներ, լեզու, քիմք, կատիկ, կոկրող,
շնչափող:

Դաստակի մաս երը՝ մատներ, ափ, մատնար-
մատներ:

Գար շապարի մասերը պատուանդան, կը-
րունկ, մատներ, ճիռք:

Առածներ.—Լեզուգ չուանի դիր.—Լեզուի տակին
ոսկոր չըկայ, որ սուտ ասելիս ծակի,—Սուտ ասողի տունը կը-
րակ ընկաւ, ոչ չըհաւատաց.—Օձի կծածը կըսաղանայ,
լեզուի կծածը չի սաղանալ.

Հանելուկներ:—1. Փոքրիկ պատուհան, շելջով լիքք:
2. Չորս մայր կային նմանակ, ունիմն նինգ-նինգ զաւակ.
հինգը մեկ մօր իին որդիք, նինգը նրանց եղբօր որդիք, տա-
սըն ել մօրեղբօր որդիք:

Երկու Եկ Մի.

Ականթի երկու, ունիս մի բերան,

Հասկացիր դու լաւ.

Աշխարհիս վերայ կըսես շատ բան,

Ու խօսէ սակաւ:

Աչքերդ երկու, ունիս մի բերան,

Հասկացիր դու լաւ.

Աշխարհիս վերայ կըտեսնես շատ բան,

Ու պատմէ սակաւ:

Երկու ձեռք ու մի բերան դու ունիս,

Հասկացիր ինձ լաւ.

Օրն ի բուն ու շատ պիտի աշխատիս,

Եւ ուտես սակաւ:

ԾՈՅԼ ԵԿ ԶԱՆԱՍԻՐ.

Այսօր խաղամ, վաղը կըսովորեմ, ասում է ծոյլը:
Վաղը կըխաղամ, այսօր սովորեմ, ասում է ջա-
նասէրը:

ԾՈՅԼ աղջի կը.—«Բանն ի՞նչ կ'անեմ, կեղտոտ է,
բամբակը կորիզոտ է, մետաքս պիտի՝ որ մանեմ, մաս-
տակ պիտի՝ որ ծամեմ, կտերը տիտիկ անեմ, անցնողին
մտիկ անեմ, ուտեմ, խմեմ, մթնի՝ քնեմ»:

ԾՈՅԼ տղան. «Նորերս հանիր, թեք գցիր, ծած-
կիր ինձ ու խաչակնիր վրաս, յետոյ ես ինքս կըքնեմ:

Անչը շեմէի մասն է. իսէ բնինը: Անչը յեւածի մասն է,
իսէ դէմինը: Գարշաղարը սուի մասն է, իսէ պատուանդանը:
Դէմին դէմի մասն է, իսէ դլուինը: Ծիտժանն անչի մասն է.
իսէ անչը. արտահնչը. իրունչը. սունչը. սունչը. դաստանիը.
ծնօտնինը: Ասընեն լուսին է, իսէ կողնին: Կո-ժն ամսն է, իսէ
իլաւնը: Օչը սունչն է, իսէ անչինը. յիշն. վաշնչը. մածնունը.
արօրը. բաշնինը...:

ՈՐԲԻ ՊԱՀՈՂՆ ԱՍՏՈՒՄԾ է.

Փայլուն արեւը արդէն մայր մտաւ,

Լուսինն էլ վաղուց գնաց, թագկացաւ,

Փոքրիկ աստղերը ամպի տակ մտան,

Եւ ցուրտ ու խաւար գիշեր էր աշնան:

Ամեն մարդ գնաց իր տունը հասաւ,

Ամեն երեխայ մօր գիրկը մտաւ:

Միայն խեղճ որբը չունի հայր ու մայր,

Չունի բարեկամ, ոչ քայր, ոչ եղբայր.

Անտէր մնացած՝ Աստուծոյ կամքին,

Խեղճը նընջում է փողոցի միջին:

ՈՉԻՍՐՆ ՈՒ ԳԱՅԼ.

Մի անգամ ոչխարը գնաց առուակի մօտ
որ ջուր խմի: Այդ ժամանակ միւնոյն ա-
ռուակից ջուր էր խմում գայլը: Գայլը վե-
րեն էր կանգնած, ոչխարը ներքելը: Զար
գազանը կամեցաւ ոչխարին ուտել: Նա վե-
րենից ձայն տուեց. «Եյ դու, ի՞նչպէս ես
համարձակվում ջուրս պղտորել. այդ բանի
համար ես քեզ խկոյն պատառ-պատառ
կ'անեմ»:

—Տէր իմ, կանչեց ոչխարը, ի՞նչպէս
կարող եմ քո ջուրը պղտուել, ես ներքեն-
եմ կանգնած, խսկ դու վերեիցն ես խմում:


«Պղտորում ես, թէ չես պղտորում, այդ
միւնոյն է, ես քեզ պէտք է ուտեմ. ձեր
ցեղը միշտ թշնամի է եղել ինձ. երէկ ես
ուզում էի մօտենամ հօտին, քո հայրն էր,
որ շներին իմաց տուեց. նրանք յետեիցս
ընկան, քիչ մնաց պատառ-պատառ էին
անում»:

—Ես հայր չ'ունիմ, տէր, հայրս վաղուց
է մեռել:

«Ուրեմն մայրդ կըլինէր»:

—Մայր էլ չ'ունիմ. մայրս չէնց այն օ-
րը մեռաւ, երբ ինձ ծնեց:

«Ուրեմն ազգականներիցդ մինը կըլի-
նէր. ինչ էլ որ լինի, դու միշտ մեղաւոր
ես իմ առաջ»: Այս ասաց չար գազանը և
անմեղ ոչխարին խեղդեց ու լափեց:



Ա.Բ. Թ.Ա.Թ.Ը.

Գիւղացիք թակարդ սարքեցին եւ մի արջ բըռ-
նեցին: Արջին սպանելով չ'սպանեցին, միայն կաղնով
նրա թաթը կըտրեցին: Երեք ստնանի արջն էլ կաղի
տալով փախաւ, գնաց: Մի խեղճ պառաւ խնդրեց,
որ արջի թաթը իրան տան. խուզեց նրա վրայի մազը
եւ կաշին էլ մաշկեց: Պառաւը միսը կրակին դրեց

եփելու, ինքն էլ նստեց կաշուի մրայ եւ սկսեց
մանել նրա մազը: Մանեց-մանեց մինչեւ կէս գի-
շեր: Կէս գիշերին՝ մէկ էլ տեսնես, մի ձայն է լը-
սում՝ մի բան լուսամուտի տակ թմիթմիացնում,
ջղկղկացնում է:

Պառաւը լուսամուտից դուրս է նայում եւ ի՞նչ
է տեսնում:—Տեսնում է որ թաթը կտրած արջը,
կաղի տալով, մօտենում է խրճիթին:

Պառաւի լեզին պատուեցաւ. նա կենում էր մեն-
մենակ գիւղի մի ծայրում: Ի՞նչ անէր, ի՞նչ չ'ա-
նէր, արջից ի՞նչպէս աղատուէր: Արջը քիչ էր մը-
նացել, որ ներս մանէր. նա արդէն տիտիում էր
որ դուռը գտնի, կրնկահան անի: Էլ ուրիշ հը-
նար քիկար. պառաւը թոնդրի բերանը բաց արեց ու
ինքը բարձրացաւ ամբարի գլուխը: Արջը գտաւ դու-
ռը, կրնկահան արեց, ներս մտաւ խրճիթը եւ սկը-
սեց մթնումը պտուառ-պտուտ անել. մին էլ ի՞նչ—
թրը՝ մի—թոնդրի մէջն ընկաւ:

Պառաւը ցած եկաւ ամբարի գլխիցը, ծածկեց
թոնդրի բերանը եւ գնաց հարեւաններին կանչեց: Հա-
րեւաններն եկան եւ արջին սպանեցին:

12. ՔԻՆԳ ԶԳԱՅԱՐՄՆՔ.

Աչքով տեսնում ենք առարկան. ականջով լսում ենք
նրա ձայնը. քթով նրա հոսն ենք իմանում, լեզուով—
համը. իսկ մատներով շօշափում ենք եւ իմանում նրա պըն-
դութիւնը, փափկութիւնը, թանձրութիւնը, նօսրու-
թիւնը, սառնութիւնը, տաքութիւնը, հարթութիւնը,
մնչարթութիւնը . . . :

ՏԵՌԱԴՈՒ-ՇՆԵԱՆ գործարանն աչքն է. ԼԱՂՈՒ-ՇՆԵԱՆ գործա-
րանը . . . հագուստ-ՇՆԵԱՆ գործարանը . . . ՀՅԱԳԻՎՈՒ-ՇՆԵԱՆ
գործարանը . . . ՏԱՂՄԻՒ գործարանը . . . :

Առածն եր:—Ականջն էնդուր չի մեծանում, որ շատ
բաներ է լսում:—Անհունար մարդու լեզուն երկար կըլինի:
—Ուրիշի աչքը քեզ համար լցու չի տալ:

Հանելուկ. Փետուրով կըցանեն, աջրով կըքաղեն,
Գըլուխով կ'ուտեն, մորով կըմարսեն:

Կացնով կորս-մէն, իսկ սղոցով: Ի՞նչ էն անս-մասէ-
դուն: Գրավէ արօնով: Տանգաղով աներով դանակով պատուա-
տաղով: Սղոցով: Երավի. Դրավի. Տանգով էնդունով էնդունով . . . :

Հնչու-մէն (ինդո՞վ). Հանդու-մէն. Հերս-մէն. կորս-մէն.
Աղցցու-մէն. Գրս-մէն. Երկանը ժեման-մէն. Արս-մէն. կորս-մէ-
ն. յւան-մէն. Գորս-մէն. Առայս-մէն. Առազու-մէն . . . :

ԿԱՂՆ ՈՒ ԿՈՑԲԸ.

Կաղն ու կոյրը պէտք է անցկենային մի սրընթաց
առուակով: Ի՞նչպէս անէին: Կոյրը կաղին շալակեց եւ
երկուն էլ սպահով անցկացան:

ԱՌԱԽՈՑ.

Փայլուն ճաճանչով արեւելք ծածկուեցաւ.
Գետի մօտ գիւղի կրակը հանգաւ.
Դաշտի ծաղիկներ ցօղով ծածկուեցան.
Տաւար ու ոչխար արօտ գուրս եկան.

Թամանը մէգերը երկրից հեռացան.

Ամեն կենդանիք դաշտը լցուեցան.

Մարդիկ զարթեցան, գործը ձեռք առան.

Արեւը ելաւ, աշխարհ բերկրեցաւ:

ՈՉԻԱՐ:

I. Գարնան վերջերում հօմիւը խուզեց իր ոչխարները: Ինու ցուրտ էր եւ իսեղճ կենդանիները դողդողում էին:

Աստուած խղճաց ոչխարների վրայ եւ աշխարհ ուղարկեց արեւի տաք ճառագայթներն ու ջերմ քամին: Ոչխարները տաքացան եւ ուրախ-ուրախ վազեցին գէպի դաշտը. իսկ աշունքադէմ նրանց բուրդը նորից դուրս եկաւ:

II. Մանուկներն ամեռոց ամառ ուրախ զուարթ խազում էին: Զմեռն եկաւ եւ նրանք յշկարողացան առաջուայ պէս շուտ-շուտ դուրս վազել: Տխուր նստոտած էին լուսամուտների առաջ եւ նայում էին գէպի դուրսը. դուրսն էլ ձիւնը քուզայ-քուզայ էր անում: Մայրը գնեց ոչխարի բուրդ, թել մանեց եւ վափուկ գուզաներ ու թաթմաններ գործեց իր որդոց համար, յետոյ շալ գործեց եւ շալից նրանց հս մար շորեր կարեց: Այնուհետեւ մանուկները տաք հագնուեցան, համարձակ դուրս վազեցին եւ ուրախ զուարթ սկսեցին ձնագընտի խաղալ:

ՏՂԱՅՈՒՅ ԱՂՅՈՅՔ:

— «Հայր մեր երկնաւոր, Հայր ամեն մարդի,

Դու ինձ ամեն օր տաս հազար բարի՝

Կեանք, լոյս, կերակուր, հայր եւ քաղցրիկ մայր,

Մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղրայր.

Իսկ ես ի՞նչ ունիմ, որ ի՞նչ տամ Քեզի,

Առջեւդ կընկնիմ, կենամ ազօթքի.

«Ննորհըդ տուր ինձ, որ ծնողներիս,

Ուսուցիչներիս եւ իմ մեծերիս

Լինիմ միրելի, իսկ Քեզ հանձելի»:

ԿՐԹԻ ԿՈՎ:

Մարդու մէկը մի կով է ունենում:

Կովը կաթնով կերակրում է նրա բոլոր

ընտանիքը: Տանտիկինը կաթնից մածուն

է մէրում, մածունը պատրաստի կերակուր

է իսեղճի զաւակների համար: Կաթնից ու

մածունից ինոցի է հարում տանտիկինը՝

իւղը հանում պահում, թանն էլ եփում՝

կերակուր շինում: Կովի կաթնից պանիր էլ են

շինում՝ ձմեռուայ համար պահում: Այսպէս՝

կաթնատու կովը գիւղացու համար մեծ հա-

րլսառութիւն է: Մեր աստծ կովս էլ կաթ-

նատու կով էր. օրէնը երկու անգամ կըթ-

վում էր նա, և ամեն անգամ մի մեծ կովկիթ կաթն էր տալիս: Մի անգամ՝ գիւղացին հիւրերի էր սպասում. խնամիքը հարեան գիւղից տեսութիւն պիտի գային: Կաթը շատ պիտի հարկաւորուէր. պէտք էր թարմ կարագ, սեր, մածուն պատրաստել պատուաւոր հիւրերի համար: Ի՞նչ անէր տանտիկինը: Մտածեց-մտածեց խելօքը և վճռեց, որ մի երեք-չորս օր չըկթէ կովը. «Յետոյ վերջին օրը հինգ-վեց կովիթ միանգամից կրկթեմ», ասաց նա: Բայց ի՞նչ. երեք-չորս օրից յետոյ՝ երբ ուզում էր կթել, տեսաւ որ ցամաքել է կովը. չըկթելուց կաթը յետ էր տուել կովի ծծերում: Խեղճ տանտիկինը նոր հասկացաւ, որ չըգործածելուց ամենայն ընդունակութիւն ըթանում է:

ՍԱՐԴԻԿ. ԿԵՆԴԱՆԻՆԵՐ, ԲՈՅՍԵՐ, ՀԱՆՔԵՐ

Մարդիկ՝ հայր, մայր. եղբայր, քոյր. հօրեղբայր, քեռի. հօրաքոյր, մօրաքոյր. ծերունի, պառաւ. մանուկ, տղայ, աղջիկ, կին. վաճառական, աղքատ . . . :



Կենդանին եր՝ գազաններ, թռչուններ, ձբկներ, սողուններ, միջատներ, խեցգետիններ, սագեր...:

Բոյսեր՝ ծառեր, թփեր, հացաբոյսեր, խոտեր, բանջարեղեններ, սոմկեր, մամուռներ:

Հանքեր՝ մետաղներ, քարեր, հողեր, աղեր:

Առածներ. Ինչ չե ծնում, նա չի մեռնում: — Երկաթը տաք-տաք կըծեծեն: — Ապրիլ կայ երկաթ է, ապրիլ կայ արծաթ է:

Հանելուկ: Են ի՞նչն է՝ որ առաօսեան չորս ոսփ վրայ է մանգախս, ճաշին երկու, խոկ երկեղին երեք:

Շուտասելուկ: — Ծիտը ճմբան ծերին, ծոփ ճուտի ճիթը ծուռ:

Կաղնին ծառեւ, իսկ մարդենին նու-իւ է: Զի՞ն լորդուանի իւնդանիւ, իսկ ձիշեւա՞լը. բահը ժութիւ է, իսկ բաշիւ ըստունը. գնդակը խաղալիւ է, իսկ իւսունը տառանիւնը.

առարկայ է, իսկ մասն ճը. բարդը նուշուն է, իսկ օ՞չը. խողած-
բը բանջարանացի բայս է, իսկ յա՞րենը. առաստարը իսոր է, իսկ
սիսե՞նը. երկանը հանտ է, իսկ բայքը. առեծը վայրենի
ժայռան է, իսկ սո՞լուը. առաստելը յա՞նի է իսկ գո՞րտը. ա՞լու-է-
ը. ես՞ու. գա՞րեն. ժէ՞նին. բաժան էը. վէ՞ճը. սեղո՞նը...:

Ապիսորը ճարդ է. նո՞ւ-էը. նուշո՞նը. գէ՞րէը. առի-
դը. մանս-ըստին. ե՞րկանը. եզրա՞յը. ձա՞ւը. մանս-քը.
առո՞ւին. գայլա՞րը. նուշո՞նը. իս՞ուը. ս՞իլը. հա՞յը. օրէ՞րտը.
ճառա՞յը. մեղո՞ն. հս՞ուը...:

Պ Ս Ա Կ Ն Ե Բ.

(Պարերգ)

Մէկ սիրտ լինինք եւ մէկ հոգի,
Միութիւնն է զարդը կեանիքի.

լա, լա, լա, լա...

Ի՞նչ խաղի մէջ որ գոհ լինինք,
Մէր միութեան մենք պէտք ունինք.

լա, լա, լա, լա...

Վարդէ պսակ.

Վարդ ծաղկին լինինք նման
Եւ օրինակ հեղութեան.
Թող վարդն հանգստանայ
Մէր մատաղ սրտի վերայ:

Կաղնեայ պսակ.

Կանաչ խոտը դաշտերի
Մէր սրտին է սիրելի.
Թող ճիւղը կաղնի ծառին
Պսակ լինի մեր գլխին:

Մանուշակէ պսակ.

Աղնիւ սիրուն մանուշակ,
Համեստութեան օրինակ,
Տուր մեզ ծաղիկ գեղեցիկ,
Քո քնիոյշ հոտ անուշիկ:

Բոլորը միասին.

Սիրուն կանանց պսակին

Թող միանանք, բարեկամք,
Եւ յոյսերը անբաժան

Մնան մեղնից յաւիտեան.

լա, լա, լա, լա...

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԵԱՆՔ է.

Աքաղաղն ու հաւը եղբայրացան: Աքաղաղը գնաց
այգին եւ խակ պտուղներ էր ուսում: Հաւն էլ ասում
էր նրան. «Մի ուտիր, եղբայր, վնաս կըտայ, մի՛ ու-
տիր»: Աքաղաղն ականջ չըդրեց. նա այնքան կերաւ, որ
հազիւ կարողացաւ տուն համել:

— Երբ տուն հասան, աքաղաղն սկսեց գանգատուիլ.

«Վայ, քուրիկ, փորս ցաւում է», ասում էր նա:
Հաւը նրան ամանուխի կաթիներ խմացրեց, մանա-
նեխ շաղախեց՝ փորին դրեց եւ ցաւն անցկացաւ:


Աքաղաղն առողջացաւ եւ գնաց դաշտը: Այնտեղ թռչկրտաց, վազվեց եւ բոլորովին քրտնած՝ մօտեցաւ աղբիկին, որ սառը ջուր խմէ: Հաւը խրատում էր նրան. «Մի՛ անիր, եղբայր, ասում էր, սպասիր. քիչ հանգստացիր, յետոյ կրխմես»: Աքաղաղն ականջ չարեց նրան՝ սառը ջուրը խմեց, միսեց եւ սկսեց դողացնել: Մեծ դժուարութեամբ տուն հասցրին նրան: Հաւը վազեց բժիշկ բերելու: Բժիշկը եկաւ եւ նրա համար դառը գեղ գրեց: Աքաղաղը երկար ժամանակ պառկած էր անկողնումը:

Զմեւնադէմ աքաղաղն առողջացաւ եւ գնաց գետի ափը խաղալու: Գետը ծածկուած էր բարակ սառուցով: Նա կամեցաւ սղզալ սառուցի վրայ: Հաւն այս անգամ էլ խրատում էր նրան. «Մի՛ անիր, եղբայր, գեռ սառուցը բարակ է, կրկուրովի եւ կրխեղդովիս», ասում էր: Բայց աքաղաղը ըլլսեց եւ սկսեց սղզալ, խաղալ: Յանկարծ սառուցը կոտրուեցաւ եւ մեր անհնաղանդ աքաղաղն ընկաւ ջրի մէջն ու խեղդուեցաւ:

14. ՕՐՈՒԱՅ ՄԱՍԵՐԸ, ՇԱԲՈՒԱՅ ՕՐԵՐԸ, ՏԱՐՈՒԱՅ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ.

Օրուայ մասերը՝ յերեկ, գիշեր, առաօտ,
կէսօր, երեկոյ, կէս-գիշեր:

Շաբաթուայ օրերը՝ կիւրակի, երկուշաբթի,
երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ:
Ճարուայ եղանակներ՝ գարուն, ամառ,
աշուն, ձմեռ:



Առածներ: Էսօրուայ բանը էգուց մի՛ գցիր: — Էսօրուայ փուշը, էգուցուայ նուշը: — Վեց օր գործի ը, եօթներորդ օրը հանգստացիր.

Հանելուկ: Մի մանուկ կար՝ զօրեղ հրեղէն, խմեց նատցրեց ջուրը՝ գետից. բոյոր մարդկանց արաւ նա քեն նընձեց վերցրեց խոտը՝ դաշտից:

Գարշունը դարշուն՝ էղանակն է. ցերեկը. իւրաքին. ամառը.
երիս-շաբթին. գիշերը. շրեւշաբթին. առաօտը. երեւշաբթին. աշունը.
ճարուայնը: Օրը ժամանակի լուկ է. շաբթանը շաբթան-այցը օրն է. ճարուայնը. հինգշաբթին. յաւը...:

ԿԻՐԱԿՆԱՄՈՒՏԻՑ.

Իրիկնաժամի զանգակը տուին,
Բարեպաշտ մարդկանց ժամ՝ հրավիրեցին.
Վաղը կիւրակի՝ Աստուծու օրն է,
Վերջացրէք գործերդ, հանգստեան ժամն է:

Հաեց գիւղաղին դաշտումն այս ձայնը,
Դէպի տուն քշեց եզն ու գութանը:
Գիւղական փոքրիկ պարզ եկեղեցին
Լցուած մարդիկը աղօթում էին.
Գառը քրտմքով գնած մոմերը
Սուրբերի առաջ մեղմ փառվում էին:

Ե՞րբ է լին ՈՒՄ.

Զիւնը հալվում է, խոտը կանաչում; ծառերը ծաղկում; օրը երկարում: — Այս Երբ է լինում:

Ամիսներն անցան, օրերը տաքացան, ամնպեր բարձրացան, անձրեւ թափեցին: Արտերն հասել են՝ հնձող են կանչում: — Այս Երբ է լինում:

Մարդիկ դուրս եկան, այգին քաղեցին: Օրը կարճացաւ, հունածը վերջացաւ. բարակ անձրեւը բարձրից է թափվում; իսկ մուժ գիշերը չորս կողմութ բռնում: — Այս Երբ է լինում:

Դաշտ ու ձոր ահա ձիւնով ծածկուեցան. ծառերից սառցէ շիթեր կախուեցան: Մարդիկ ներս մտան իրանց տները. իսկ գաղանները — իրանց բները: Դուրս սաստկութեամբ քամի է վիզում եւ ձիւնի փոշիով աշքերդ լցնում: — Ասացէք, տեսնեմ, այս Երբ է լինում:

ԶԻՒՆ.

Երբ որ ձիւն կըգայ, ես կ'ուրախանամ,
Որ գուրս պիտ ենեմ, դահօւկ պիտ խաղամ...
Բայց տեղս որքան աղքատ տղայք կան,
Որ տաք հաղափց կարօտ կըմնան:

ԶՈՒՅՑԱՆ ԿՈՒԹԻՒՆ.

1. Զմեռն էր: Գետը ծածկուել էր սառուցով: Գարեգինը իր ընկերների հետ խաղում եւ սղղում էր հաստ սառուցի վրայ: Բասական խաղալուց յետոյ՝ նա ուրախուրախ տուն վազեց եւ ասաց հօրը. «ԱՇԽ, հայրիկ, ի՞նչ պատուական եղանակ է ձմեռը, որքան ուրախութիւններ ենք անում մենք՝ ձնագունուի ենք խաղում, ողղում ենք սառուցի վրայ, սահնակներով ղբօսնում ենք...: ԱՇԽ, ի՞նչ կը լինէր՝ որ միշտ ձմեռ լինէր»: Հայրը հանեց ծոյի տետրակը եւ ասաց. «Գրիր սրա մէջ քո ցանկութիւնը»: Գարեգինը գրեց:

2. Զմեռն անցկացաւ: Գարունը եկաւ: Բացուեցան ծառերի ծաղիկները. բարձրայան դաշտերի խոտերը. ամենայն տեղ սատուտում էին հաղարաւոր թիթեռներ եւ քղզներ: Գարեգինը դուրս գնաց դաշտը, ծաղիկներ քաղեց, թիթեռներ բռնեց, եւ երբ երեկոյեան տուն եկաւ, ասաց հօրը. «Պէտք է խմանաս, հայրիկ, թէ որքան ուրախացայ ես այսօր: ծշմարիտ, շատ հիանալի եղանակ է գարունը, եւ եթէ ինձ մնար, ես կըցանկանայի, որ միշտ գարուն լինէր»: Հայրը հանեց տետրակը եւ առաջարկեց Գարեգնին, որ իր ցանկութիւնը գրէ: Գարեգինը գրեց:

3. Ամառնացաւ: Դաշտերի խոտը հասել էր եւ հնձող էր կանչում: Գարեգինը եւ իւր հայրը գնային խոտ հընձելու: Քանի որ հայրը վէր էր տալիս անուշահոտ խոտը, Գարեգինն իրան զուարճութիւններն էր կատարում՝ ձուկն էր բռնում գետակից, հատ սպոտուզներ էր հաւաքում, հոտաւետ խոտերի վրայ գլորիում էր: Երեկոյեան՝ տուն յետ դառնալիս, նա ասաց հօրը. «Ահա այսօր ես

անչափ ուրախացայ: Երանի թէ ամառը վերջ չ'ունենար»:
Գարեգնի այս ցանկութիւնն էլ գրուեցաւ տեսրակի մէջ:

Ա. Վերջապէս եկաւ եւ աշունը: Այզիներում լաւ-
լաւ պտուղները հասել էին՝ ինձորը, տանձը, սալորը,
սերկեւիը, խաղողը . . .: Մարդիկ դուրս էին եկել այ-
գեկութի: Գարեգինն էլ իր ծնողների հետ գնաց այդի եւ
քաղն սկսեցին: Պէտք էր տեսել, թէ ի՞նչպէս էր վաղ-
վզումնա մէկ ծառի տակից գէպի միւսը, ծիծաղում,
երգում, խաղում եւ պտուղներից բերանը գցելով՝ անուշ
անում: Վերջը նա վազեց հօր մօտ եւ նրա պարանոշով
փաթաթուելով՝ ասաց. «Հայրիկ, աշունը տարուայ
ամենալաւ եղանակն է»:

Այն ժամանակ հայրը հանեց փոքրիկ տեսրակը եւ
ցոյց տուեց, որ նա գաղնան, ձմերուան եւ ամառուան
համար էլ միեւնոյն բանն է առել:

Պատմեցէ՛ք ծեր քառ երավ այս պատմութիւնը. ասացէ՛ք թէ քա՞նի
զիաւը կտորների կարողէք բաժանել սրան եւ ի՞նչ է ասուած իւրա-
քանչիւր կտորում:

15. ԱՄԻՍՆԵՐ.

Ա. Միսներ. յունուար, փետրիար, մարտ, ապրիլ,
մայիս, յունիս, յուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմ-
բեր, նոյեմբեր, դեկտեմբեր:

Զ մ ե ր ա յ ի ն ա մ ի ս ն ե ր. դեկտեմբեր, յունուար,
փետրիար:

Ա. Մարտ յին ամիսներ. յունիս, յուլիս, օ-
գոստոս:

Ա. Հ ն ա ն ա յ ի ն ա մ ի ս ն ե ր. սեպտեմբեր, հոկտեմ-
բեր, նոյեմբեր:

Գ ա ր ն ա յ ի ն ա մ ի ս ն ե ր. մարտ, ապրիլ,

մայիս:

Յ ա ս ս ա յ ի ն ա մ ի ս ն ե ր... Ս ե պ ա ր է մ է շ ը ա շ-
նանային ամիսն է, իսկ ի վ ե ր ը լ ո ւ ր... Մ ա ր դ ը գ ա ր ն ա ն ա յ ի ն ա մ ի ս ն է,
իսկ յ ա ս ս ա յ ի ն է... Յ ա ս ս ա յ ի ն ա մ ի ս ն է, իսկ հ ա յ դ ը է մ է շ է լ ո ւ ր...
Ա պ ր է լ ո ւ ր. օ գ ո ս ս ա յ ի ն ա մ ի ս ն է լ ո ւ ր. հ ա յ է մ է շ է լ ո ւ ր . . . :

Տարին քա՞նի ամիս ունի. ո՞րն է առաջին ամիսը. ո՞րն է վեր-
ջինը: Ո՞րոնք նև գարնանային ամիսները. Ասացէ՛ք ամարային ամիս-
ները: Ո՞րն է աշնանային վերջին ամիսը... ո՞րն է առաջինը, միջինը...:

ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ԱՐՁԸ.

I. Գիւղացին եւ արջը բարեկամացան եւ միասին
խորհուրդ արին, որ կարտովիլ ցանեն: Գիւղացին ա-
սաց. «Արջ բարեկամ, արմատն ինձ, գլուխը քեզ»: Ար-
ջը համաձայնեցաւ: Նատ լաւ կարթովիլ դուրս եկաւ:
Գիւղացին վերառաւ արմատի կորտովիլները, իսկ վե-
րեւի չոփերը տուեց արջին: Արջը շատ էլ վլնթվրն-
թաց, բայց ի՞նչ կարող էր անել:

II. Միւս տարի գիւղացին նորից ասաց արջին. «Արջ
եղբայր, արի էլի միասին ցանք անենք»:

— Լաւ, պատասխանեց արջը. միայն այս տարի ես
արմատը կըվերառնեմ, իսկ դու վերցրու վերեւի մա-
սը:

Գիւղացին համաձայնեցաւ, բայց այս անգամ կար-
տովիլի փոխանակ ցորեն ցանեց: Նատ առատ ցորեն

դուքս եկաւ: Գիւղացին վերառաւ հասկերը, խոկ արջին
մնաց արմատները:

Ի՞նչ բոյսեր գիտէք, որոնց արմատն ենք ուսում:

Ի՞նչ բոյսեր գիտէք, որոնց վերին մասն ենք ուսում:

Մ Ա Յ Ի Ս.

Մենք արժանացանք ուրախ մայիսին,
Ծառեր, ծաղիկներ ողջ կանաչեցին.

Կապոյտ երկնքում փոքրիկ ամպերը
Ուրախ ու զուարթ առաջ վագեցին:

Տերեւշատ ծառի սոտերների տակ
Թուզուններն իրանց երգերն են երգում,
Կանաչ դաշտերի փափուկ մարգերում
Պէսպէս կենդանիք ուրախ արածում:

Արդը և ուրեւ ժէսէն մասերն են, իսկ արդը և և արածը:
Դաստիարակ և արման կը առաջ մասերն են, իսկ հսկածը և և իրը:
Գլուխը և պարանացը մասը մասերն են. իսկ սղիդահիսը և ձեռացը և և նը: Բիշը և արդաւանանեցը աղքէ մասերն են, իսկ արդամներն
և և լշում: Մարդը և աղքեւը ժարշանային ամեներ են, իսկ
աւագութեցէրը և հայութիւնը: Յանինը և յանլէնը ամսրային
ամիսներ են, իսկ յանվացը և իւրաքանչը: Գայը և արջը ժապան-
աներ են, իսկ ժառաը և և նորը: Սանինը և ժաղիկը բայց եր են,
իսկ աշը և երիանը. անդունը և աղանգանը: արջը և բնիւը.
Էտենը և զարը: Գրեւը և ճառիւքը. ինչանին և երիան-շանին: Ժարանն և յեւը . . . :

Հ Ո Կ Տ Մ Բ Ե Ր Ի Ն.

Սրեւն իւր ոյժը կորցըրած՝

Ամպերի տակ ծածկուեցաւ,

Սաստիկ քամին ողջ ծառերի

Տերեւները վէրածաւ:

Նատ թուզուններ եւ թիթեռներ

Անյայտացան դաշտերից,

Ծառը չոնի կանաչ տերեւ,

Նա զրկուած է իւր զարդից:

Երկնքումը ամսի քուէքն

Անձրեւններ են պատրաստում,

Անտառը իւր տերեւներով՝

Առուն տիսուր քչքչում:

Ինչի դաշտերի սողուններ

Եւ վայրենի թուզուններ

Նտապում են իրանց համար

Մի ապահով տեղ գտնել:

Մ Ե Ղ Ո Ւ Ն Ե Ր.

Գարունն սկսուեցաւ. արեգակը հալեցրեց դաշտերի
ձիւնը. հին՝ գեղնած խոտերի մօտ գուրս եկան կանաչ
խոտի բողբոժներ. ծառերի կոկոնները բացուեցան եւ
փոքրիկ տերեւներ առաջ բերին:

Ահա մեղուն էլ ձմերային բնից զարթեց, բրդոտ
թաթիկներով սրբեց աչերը, ընկերներին զարթեցրեց
եւ միասին դուրս նայեցին լուսամտից, որ տեսնեն,
թէ ձիւնը, սառուցը եւ հիւահային սառը քամին անցէլ
են:

Մեղոները տեսնում են, որ արեգակը փայլում է,
որ ամեն տեղ տաք է եւ լոյս. նրանք դուրս են գալիս
փեթակից եւ թռչում են դէպի ծիրանի ծառը:

«Սիրուն ծիրանի, չ'ունի՞ս մի բան խեղճ մեղու-
ներիս համար. մենք ամբողջ ձմեռ քաղցած ենք»:

—Ոչ, պատասխանում է ծիրանի ծառը. դուք շատ
շուտ էք դուրս եկել. իմ ծաղիկները դեռ եւս պահուած
են կոկոններիս մէջ: Գնացէք, նշենուն հարցրէք:

Մեղոները թռան գնացին նշենու մօտ: «Սիրելի
նշենի, արգեօք մի բան չ'ունի՞ս սոված մեղոներիս
համար»:

—Վազը եկէք, սիրելիք, պատասխանում է նրանց
նշենին. այսօր ինձ վրայ ոչ մի բացուած ծաղիկ չըկայ.
իսկ երբ բացուին, ես մեծ ուրախութեամբ կընդու-
նեմ ձեզ:

Թռան մեղոները կակաչի մօտ, նայեցան նրա փայ-
լուն գլխին, բայց նա էլ ոչ հոտ ունէր եւ ոչ մեզը:

Մեղոները տրտում եւ քաղցած կամենում էին յետ
դառնալ տուն, բայց տեսան թփի տակ մի քնքոյշ մուգ
կապուտ ծաղիկ: Սա մասուշակն էր: Նա բաց արաւ մե-
ղոների համար իր կոկոնները, որոնք լիքն էին անուշ
հոտով եւ քաղցր հրթով: Կերան, իմեցին մեղոները եւ
ուրախ զուարթ յետ դարձան տուն:

ՄԵՂՈՒԻ.

Հա, ծագեցաւ արեգակը,
Հա, ծաղկեցաւ մանուշակը,

Մեղոն թողեց իր փեթակը,
Տըզտըզալով-տըզտըզալով:
Մեղոն թռաւ ծաղկէ ծաղիկ,
Մոմը տարաւ հոտու, լուսիկ,
Պըզպըզալով-պըզպըզալով:
Անուշ մեղրը՝ մանը տղոց.
Դեղին մոմը՝ ամեն սրբոց,
Իսկ չարերին կըճ ու խայթոց,
Կըսկըճալով-կըսկըճալով:

16. ՏՕՆԵՐ

Աստուածամօր ծնոնդը. Աւետումն. Քրիստոսի
ծնոնդը եւ Մկրտութիւնը. Տեառնընդառաջ. Ծագկա-
գարդ կամ Քրիստոսի գալուստը. Զատիկ կամ Սուրբ
Յարութիւն. Համբարձումն. Հոգեգալուստ. Վարդա-
վառ, Վերափոխումն Աստուածանի. Խաչիերաց . . .
Առածներ. —Կարմիր ձուն զատկին կըսազի. —Տարին մի
զատիկ, այն էլ նաւակատիկ. —Նգուաւի բերանով Վարդավա-
ռին ձիւն կըգայ:

Հանելուկներ: —Երեք ոտքեն, մեկ մօրուսեն, կայ-
ներ կ'ուտէ մեր հօր քիսեն: —Երկար աղիք, ծերը ծաղիկ:

ՆՈՒՐԻՆ

(Անձրեսաբեր)

Նուրին-Նուրին եկել է,
Աջբահուրին եկել է,
Եիլայ շապիկ հագել է,
Կարմիր գօտիկ կսպել է:

Եղ բերէք՝ վարսը քսենք,
Զուր բերէք՝ գլխին ածենք,
Մեր նուրինի փայլ տուէք,
Ուտենք, խմենք, քէֆ անենք:

Ճ Ս Լ Ի.

(Արեւաբեր)

Ճօլի-ճօլի, ճօլ չըկայ,
Խավիծ անեմ, եղ չըկայ,
Ճօլին ընկել է ծովը,
Ծովիցը հանող չըկայ:
Չուան բերէք՝ դուրս հանենք,
Թոկ բերէք՝ կըցան անենք,
Չու բերէք՝ թաթին դնենք,
Եղ բերէք՝ վարսը քսենք:
Խոփը պատումն է ժանգոտել.
Ճեփչը տափումն է ժանգոտել.
Կանաչ դաշտերին ենք կարօտ.
Կարմիր արեւին ենք կարօտ:

Ճ Զ Ա Ն Ա Կ.

(Զատկական երգ)

Ճըռ-ճըռ, ճըանակ,
Աստուծոյ դուռը բանանք,
Դուրսը ժամ՝ ասենք,
Ներս գանք՝ պատարագ անենք:
Սեւ եզր մատաղ անենք,
Պողերը չարդախ անենք,
Տակը նստենք քարգահ անենք:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ԵՐԳԸ.

Ալէլուիա, ալէլուիա.
Հըրէս եկաւ մի ձիաւոր,
Լախտը ձեռին քաջ ձիաւոր,
Աջու ձեռին Աւետարան,
Զախու ձեռին Սաղմոսարան.
Աջով գրէր, ձախով ջընջէր,
Ձախով գրէր, աջով ջընջէր.
Բարեկամ, երեխայիդ անունն ինչ է:
Ճեր . . . թախտին նստի,
Փափուկ ձեռը ջէրը տանի,
Հինգ աբասին ջէրից հանի,
Սուրբ Սարգսին մատաղ անի:

ԾՆՆԴԵԱՆ ԵՐԳ.

Ալէլուիա ալէլուիա.
Զատիկը արեւուսով,
Զրորչնէքը ճրագլուսով,
Թէ քնած էք, վեր զարթեցէք,
Թէ զարթուն էք, լաւ լսեցէք.
Մարիամ եկաւ լալով-լալով,
Լալով-լալով, մղկըստալով.
Լուսաթաթախ մանով ծնեց,
Ծով ու զամաք լուսով պատեց:
Ճեր տունին է չորեքսիւնի,
Զորս սիւներից ո՞րն է սայի.
Սալը չարակամի սրտին,
Սպրի բարեկամի որդին:

Տունը շէն, տունը շէն,
Ձեր տղայոց անունն ի՞նչ է:
—Հայկ ու Արամ է:
Դրանք նատեն մէկ սեղանի,
Գինի խմեն չախջուանի,
Ձեր թշնամոն գետը տանի,
Գայլագռաւը աչքը հանի.
Մէկ պոչատ հաւ, մէկ ըստիլ եղ՝
Տունք, ալէլուիան տանի:

ԿԻՍԼԱՆՁԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

I.

Լինում է-չի լինում մի պառաւ: Այս պառաւն ունենում է երեք տղայ՝ երկուան առողջակազմ; իսկ երրորդը պակասաւոր: Նրանք ապրում են խեղճ, աղքատիկ: Մի օր պառաւն ասում է որդոցը. «Սիրելի որդիք, տեսնում էք ի՞նչ չքատրովթեան մէջ ենք. ի՞նչ էք տանը նատուել. գնացէք, աշխարհո մեծ է, մի գործ բռնեցէք, որ ձեզ համար գոնէ մի կտոր հաց ունենաք»: Եղբայրները խորհրդի նստեցան: Ի՞նչ անեն, ի՞նչ չ' անեն: Միջնակ եղբայրը մեծին ասաց. «Լսել ես, ապէր, ասում են որ այս ինչ անուառում մի վիշապ կայ, մեծ հարստութեան տէր, արի գնանք, սպանենք նրան եւ փողերը վերառնենք»: Մեծ եղբայրը համաձայնովթին տուեց: Փոքր եղբայրը խնդրեց, որ իրան էլ հետները տանեն:

—Դու ինչի՞ համար ես գալիս, Կիմանջ, գլխը ներիս բեռը լինելու. գու տանը կը լինաւ, մօրդ կը մը

լիիթարես, մինչեւ որ մենք յետ կը գանք, ասացին եղբայրները: Յետոյ իրանց մօրը մնաս բարով ասելով՝ նրանք ճանապարհ են ընկնում:

Գնում են-գնում՝ շատ ու քիչն Աստուած գիտէ, համում են մի աղբիգի, որի մօտից ճանապարհը երկուակ էր բաժանվում: մեծ եղբայրը բռնում է մէկ ճանապարհը, միջնակը միաւը:

Գնում է-գնում մեծ եղբայրը եւ պատահում է մի հովուի:

—Բարի աջողում:

«Աստրծու բարին»:

—Հովիւ եղբայր, եթէ այս ճանապարհը բռնած գնամ, այս ինչ վիշապի բնակարանին չեմ հասնի:

«Կըհանես, բայց Աստուած ազատէ քեզ այդ բանից. ի՞նչ ունիս դու այդ մարդակերի մօտ»:

—Լսել եմ որ մեծ հարստովթեան տէր է. ուզում եմ սպանեմ եւ փողն ու հարստովթինը վերառնեմ:

Այս խօսքերը որ լսեց բարի հովիւը, ոկուց քթի տակը վիճնթփենթալ.

«Ահա մի մահկանացու,

իր գլխից ձեռք վերառած.

Դատարկ յոյսերից խաբուած,

Կամենում է զոհ լինել

Մեծ վիշապին մարդակեր»:

—Ի՞նչ ես ասում, հովիւ եղբայր. միթէ կարծում ես, որ չեմ կարող սպանել վիշապին: 07, դու ինձ չես ճանաչում:

«Այ մարդ, գիտես ի՞նչ կայ, ասում է հովիւը. ես քեզ մի փորձ կ'առաջարկեմ: ես կը կթեմ իմ երկու սեւ այծե-

րը, կաթնով կըցնեմ այս կովկիթը, կըբրդեմ, առաջդ կըդնեմ: յետոյ կըհեծնեմ ալծերից մինը եւ կըպտրտեմ հօտի շուրջը. եթէ դու այդ միջոցին բոլոր կովկիթը դատարկած լինիս, կարող ես վիշապին յաղթել, եթէ ոչ չես կարող»:

Պառաւի տղան համաձայնեցաւ: Հովիւը կովկիթը լցրեց եւ սկսեց պտղտել. բայց երբ եկաւ մեր ճանապարհորդի մօտ, նա կաթնաբրդոշի կէսն էլ չէր կերել: Այն ժամանակ բարի հովիւն ասաց նրան.

«Արի՛, եղբայր, մի անիր,
Փորձուած հովուիս ականջ դիր,
Յետ դառ, գլուխդ ազատիր»:

Ականջ չ'արեց մեր ճանապարհորդը խեղճ հովուի խօսքին եւ առաջ գնաց: Գնաց-գնաց եւ պատահեցաւ մի ուղտապանի:

— Բարի աջողում:

«Աստղու բարին: Օտար եղբայր, ուր ես զնում»:
— Գնում եմ այս ինչ վիշապին սպանեմ եւ նրա գանձը վերառնեմ:

Ուղտապանն էլ՝ այս որ լսեց, սկսեց երգել.

«Ահա մի մահկանացու,
Իր գլխից ձեռք վերառած,
Դատարկ յոյսերից խաբուած,
Կամենում է զոհ լինել
Մեծ վիշապին մարդակեր»:

— Ի՞նչ ես երգում, ուղտապան:

«Ես այն եմ երգում, որ դու կըգնաս, ինչպէս գնացել են շատերը եւ էլ յետ չես դառնալ. մեծ վիշապը քեզ ողջ-ողջ կուլ կըտայ: Պէտք է դիտենաս, այս օտարական, որ նա միայն կարող է մեծ վիշապի հետ

կոխւ տալ, ով որ ահա այս ուղտին վչելով գետին կըգորէ»:

Այս ասաց ուղտապանը եւ մի մեծ ուղու քաշեց, մեր ճանապարհորդի առաջը կանգնեցրեց: Պառաւի տղան ուղեց ցոյց տալ իր ոյժը-վչեց, վչեց, բայց ուղտը տեղիցն էլ չշարժուեցաւ, ուր մնաց թէ վէր ընկնէր: Այն ժամանակ բարեսիրտ ուղտապանը նորից սկսեց երգել.

«Արի՛, եղբայր, մի անիր,
Ուղտապանիս ականջ դիր,
Յետ դառ, գլուխդ ազատիր»:

Ծիծագեց մեր ճանապարհորդը բարի ուղտապանի վրայ եւ շարունակեց իր ճանապարհը: Գնաց-գնացնաց, վերջապէս հասաւ վիշապի կացարանը: Պառաւին մոխի արեց եւ տեսաւ, որ վիշապը նստած է, մի ահագին կաթսայ առաջը դրած, ձեռքին էլ մի մեծ շերեփ՝ ճաշ է ուտում:

Պառաւի տղան կանչեց.

«Վիշապ, վիշապ, դուրս արի
Միմեանց հետ կոխւ անենք,
Բաց ու արձակ սրահում
Զօր-զօրի տանք, կոխ-բըռնենք»:

Նատ ուրախացաւ վիշապը, որ մի խեղճ ագամորդի իւր ոտուն եկել է նրա դուռը, եւ առանց տեղիցը շարժուելու ներսիցը պատասխան ոտուեց.

Օտարական, քո ձայնից
Իմ սիրտս կըտրատվում է,
Բոլոր մարմինս երկիւղից՝
Ոտն ու ձեռս դողում է:

Աղաջում եմ, ինձ խղճա՛,
Մի սպանիր չարաջար.
Մտի՛ր, իմ բոլոր տունա
Քեզ մատաղ է, վերառ, տար»:

Ճանապարհորդը խարուեցաւ եւ միամիտ ներս մը-
տաւ վիշապի սենեակը: Վիշապը բւնեց նրա վզակոթից
եւ ներքնատան գուռը բանալով՝ ցած գլորեց: «Գնա,
երգիր այլտեղ մի առժամանակ, ասաց վիշապը. Ես
դեռ եւս միքանի օրուայ պաշար ունիմ ուտելու»:

II.

Միւս առաւօտ վիշապը լսեց, որ մի ուրիշ մարդ
գուռը ծեծում եւ կանչում է.

«Վիշապ, վիշապ, դուրս արի
Միմեանց հետ կոփւ անենք,
Բաց ու արձակ սրահում
Զօր-զօրի տանք, կոխ-բըռնենք»:

«Այս ինչ բախտաւորութիւն է, մտածեց վիշապը.
Երբէք չի պատահել, որ մարդիկ իրանց ոտով իմ գու-
ռս գան, իսկ հիմա մէկի տեղակ երկուսն են գալիս»:
Վիշապը ներսից պատասխանեց.

«Ո՞տարական, քո ձայնից
Իմ սիրտս կրտքատվում է,
Բոլոր մարմինս երկիւղից՝
Ուն ու ձեռս գողում է:
Աղաջում եմ, ինձ խղճա՛,
Մի սպանիր չարաջար.
Մտի՛ր, իմ բոլոր տունա
Քեզ մատաղ է, վերառ, տար»:

Անձանօթը հպարտ-հպարտ ներս մնում. Վիշապն
ուղարկեց նրան իր եղբօր մօտ:

III.

Անցնում է միքանի ժամանակ. մեր հովուի
մօտ գալիս է մի մարդ. մի զարմանալի կէրանջ մարդ
եւ հարցնում է, թէ այս ճանապարհով երկու օտա-
րական չե՞ն անցկացել: Հովիւը պատմում է, որ երկու
անցուորական, իւր խրատին չ'անսալով, գնացին գէպի
մեծ վիշապի կացարանը, որ ինչ է նրան սպանեն եւ
փողն ու հարատութիւնը վերառնեն, բայց, աւելա-
ցրեց հովիւը, նրանք արդէն վիշապին զոհ կըլինին
եզած:

Կէս մէջքանի, մի կոմանի մարդը պատասխանեց.
«Այդ անցուորականներն իմ աւագ եղբայրներս էին.
այժմ ես գնում եմ, որ նրանց արեան վրէժն առնեմ»:
Բարի հովիւը ժպտաց եւ երգեց.

«Եղբայրներդ ջուխտ ձեռքով,
Լայն թիկունքով, հաստ վըզով,
Ի՞նչ շահուեցան նըրանից,
Թէ դու, կիսլանջ, ինչ շահուիս»:

Այնուհետեւ հովիւը կիսլանջին էլ առաջարկեց իր
պայմանը. կթեց այծերը, կովկիթը կաթնով լցրեց,
բրդեց եւ գրեց կիսլանջի առաջ, իսկ ինքը հեծաւ այ-
ծերից մինը եւ մկսեց պտըտել հօտի շուրջը: Որքան
զարմացաւ հովիւը, երբ վերադառնալով կիսլանջի մօտ,
տեսաւ որ նա կերել պրծել է եւ կովկիթն էլ լալըզում է:

Հովիւլ բացականչեց.

«Քսան տարի հովիւ եմ,
Նատ մարդիկ եմ ես տեսել,
Նատ մարդիկ հէնց այս փորձով
Ես ճանապարհ եմ գըցել,

Բայց այսպիսի մի զարմանք

Ո՛չ տեսել եմ, ոչ լսել:

Գնան, եղբայր, համարձակ,

Աստուած քեզ հետ, կարող ես

Զար վիշապին սպանել,

Փողն ու գանձը վերառնել»:

Առաջ գնաց մեր Կիսլանջը եւ պատահեցաւ ուղապանին:

— Բարի աջողում ուղտապան եղբայր, այս ճանապարհով երկու օտարական չե՞ն անցկացել:

— Անց են կացել, պատասխանեց ուղտապանը. ողբամելիքը գնում էին մեծ վիշապին սպանելու, բայց չեին իմանում, որ իրանց պէս հարիւրաւոր մարդիկ գնացել են եւ չեն վերադարձել:

Կէս մէջքանի, մի կրնանի մարդը պատասխանեց.
«Այդ անցւորականներն իմ աւագ եղբայրներս էին, այժմ ես կրգնամ եւ նրանց արեան վրէմը կ'առնեմ»:

— Օհօ, բացականչեց ուղտապանը եւ երգեց.

«Եղբայրներդ ջուխտ ձեռքով!

Լայն թիկոնքով, հաստ վըզով!

Ի՞նչ շահուեցան նրանից,

Թէ դու, Կիսլանջ, ի՞նչ շահուի»:

Այնուհետեւ ուղտապանն էլ առաջարկեց Կիսլանջին իր պայմանը. մէկ ուղտ բերեց, կանգնեցրեց Կիս-

լանջի առաջ եւ առաջարկեց, որ նրա վրայ փորձէ իր ոյժը: Կիսլանջն այնպէս փշեց, որ ուզող հինգ գազ յետույետ գնաց ու վէրընկաւ:

Ուղտապանը զարմացաւ եւ ասաց.

«Նատ տարի է ուղտապան,

Նատ մարդիկ եմ ես տեսել,

Նատ մարդիկ հէնց այս փորձով

Ես ճանապարհ եմ գըցել,

Բայց այսպիսի մի զարմանք

Ո՛չ տեսել եմ, ոչ լսել:

Գնան, եղբայր, համարձակ,

Աստուած քեզ հետ, կարող ես

Զար վիշապին սպանել,

Փողն ու գանձը վերառնել:

Գնաց մեր Կիսլանջ բարեկամը, վիշապի տուն հասաւ, գուռը ծեծեց եւ կանչեց.

«Մարդակեր վիշապ,

Գաղան ամեհի,

Հերիք անպատիծ

Մատնես մեզ մահի.

Հընչեց քո ժամը՝

Ժամ օրհասական,

Ես վերջ պիտ' դնեմ

Կեամկիդ անպիտան»:

Զարմացաւ վիշապը այս յանդուգն խօսքերի վրայ, բայց ուզեց Կիսլանջին էլ խարելով ներս կանչել, ուստի ձայն տուեց.

«Ո՞վ ես դու, տէր իմ;

Մարդ ես, թէ վիշապ.

Գայնդ է ուժգին,
Խօսքերը սարսափ.
Բայց ով էլ լինիս,
Պատրաստ եմ, ահա—
Բաւ է որ կամիս—
Դու տէր, ես ծառայ»:
Խելօք Կիսլամնջը չ'խաբուեցաւ եւ նորից կամչեց.
«Խարդախ ձեւերով
Նատ մարդ ես խաբել,
Նատին ներս տարել,
Մորթել ու լափել.
Բայց էլ հերիք է,
Պէտք է որ դուրս դառ.
Գըլուխ վըկայ,
Պիտ' լինիս մաս-մաս»:

Բարկացաւ վիշապը, կատաղեց այս համարձակ խօսքերից, զայրացած դուրս վագեց, որ յանդուգն մարդու մեծ պատառն ականջը թողի: Բայց Կիսլամնջը վաղուց քաշուել էր պատի տակը: Վիշապը գլուխը դուրս հանեց թէ չէ, Կիսլամնջի լդրանոց թուրը պոպըզայ եւ վիշապի վիթխարի գլուխը երկու կէս եղաւ: Սարի չափ դաղանը վէրընկաւ, սատկեցաւ: Կիսլամնջը յաղթական քայլերով ներս մտաւ վիշապի բնակարանը: Նա պարտեց բոլոր սենեակները, ամեն քոնջուպուճախ նայեց, բայց եղբայրներին չ'գտաւ: Երկիւզը սատեց բարի Կիսլամնջի սիրտը՝ մի գուցէ ինքն ուշացած լինի, մի գուցէ չար գաղանն արդէն լափել է նրանց: Կիսլամնջն սկսեց ձայն տալ, կամչել: Այդ ժամանակ սոների տակից մի խուզ հառաջանակը լսեց: Յած նայեց Կիս-

լանջը եւ յատակի վրայ դուան պէս մի բան տեսաւ. շտապով բարձրացրեց այդ դուռը, ականջ դրեց եւ այդ ժամանակ ահա պարզ կերպով լսեց եղբայրների ձայնը, որոնք օգնութիւն էին կանչում: Կիսլամնջը ցած թռաւ խկոյն եւ յայտնեց եղբայրներին, որ գաղանին սպանելէ: Նրանքիրար վաթաթուեցան, մէկ-մէկու համբուրեցին եւ ճառեցին միասին: Ճաշելուց յետոյ բոլոր տունը պըտըտեցին, ման եկան, բայց գանձը չ'գտան: Կիսլամնջն առաջարկեց, որ սենեակների յատակը մի երես քանդեն: Քանդեցին: Մառանի յատակի տակ մի խոր հոր հայր կանատակերից թոկ կապեցին եւ ցած թողեցին հորը: Հորի մէջ անթիւ ոսկի կար: Կիսլամնջը առաջ մեծ եղբօր պարկը լցրեց, դուրս քաշել տուեց, յետոյ երկրորդինը եւ յետոյ իրանը: Երբոր ոսկով լիքը պարկերը դուրս էլն հանած, Կիսլամնջը կամչեց, որ թոկը ցած թողեն, մէջը լուս կապի ու իրան էլ գուրս քաշեն: կամչեց Կիսլամնջը, ձայն տուեց, պատասխան չ'կայ, մարդ չ'կայ . . . :

Եղբայրները՝ Կիսլամնջի ապերախտ եղբայրները, նաև խանձուելով, որ իրանք չ'կարողայան վիշապին սպանել, թողեցին իրանց աղատողին հորի մէջ, վերառան ոսկով լիքը պարկերը եւ ճանապարհ ընկան դէպի տուն: Բայց Կիսլամնջը հորի մէջը չ'մեռաւ, նա ոտնատեղեր շինեց հորի պատերի վրայ եւ շատ չարչարուելուց յետոյ դուրս եկաւ: Ոսկով լիքը պարկը գրած էր հորի մօտ: Կիսլամնջը շալակեց պարկը եւ շտապեց, որ եղբայրներին համնի: Գնաց, տեսաւ, որ նրանք պառկել են մի ծառի տակ ու քննել: Կամնաց-կամնաց մօտեցաւ, զգուշութեամբ վերառաւ նրանց պարկերը, տարաւ թափեց միջի ոսկին մի ապահով տեղ, մանր խճաքարով լցրեց պարկերը եւ բերեց իրանց առաջուայ տեղը դրեց

ու ինքը թագկացաւ։ Եղբայրները վերկացան, վերտառան պարկերը եւ ճանապարհ ընկան դէպի տուն։ Կիսանջն էլ գնում էր նրանց յետեւից։ Երբոր մեր ապերախտները տուն հասան, դուռը ծեծեցին եւ ասացին.

«Մայրիկ-մայրիկ, դուռը բաց. վիշապին սպանեցինք, նրա ոսկին պարկերով շալակած այստեղ բերինք»։

Պառաւը ոսկու ձայնը որ լսեց, ուրախ-ուրախ դուս վազեց, որդկերանցը համբուրեց, ապա շտապեց մեծ տաշտը բերեց եւ ինչ դատարկեց. — իսիձ։ Եղբայրները փայտի պէս սառած մնացին։ Այդ բոպէին հերթիցը մէկը ձայն տուեց.

«Մայրիկ-մայրիկ, դուռը բաց.

Վիշապին սպանեցի,

Նրա ձեռքից ես դրանց

Ողջ ու առողջ փըրկեցի.

Բայց դըրանք ինձ խաբեցին՝

Ուղելով ինձ սպանել,

Հորի մէջը թողեցին։

Այլ Աստուած էր օգնական,

Ինձ այն հորից ազատեց.

Դրանց պատիժն էլ տուեց—

Պարկերը խըճով լրցրեց.

Սակայն դըրանց, մայր, ներիք,

Եւ տանից մի դուրս անիր»։

Մայրը գրկեց բարեսիրտ ու մեծահոգի Կիսանջին եւ նրա համար ձուածեղ արեց։

ՏԵՐՈՒՆԱԿՈՆ ԱՂՅԹՔ.

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեղէ աղքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի. զհաց մեր հանապաղորդ՝ տուր մեզ այսօր. եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողզումք մերոց պարտապանաց. եւ մի աանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն. զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն։

ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ԵՒ ԹՌՉՆԱԿԸ.

«Սիրուն թռչնակ, բռնուեցար,
Ցանցից չես ազատուիլ,
Ոչինչ բանով աշխարհում
Քեղնից չենք բաժանուիլ»։

— Ա՛յս, ձեր ինչին եմ պէտք ես,
Սիրելի մանուկներ.
Թողէք ինձ ազատ թռչեմ,
Բացէք ցանցիս դռներ։

«Զէ, չէ, թռչնակ, չենք թողնիլ,
Դու մեզ մօտ կըմնաս.
Մենք քեզ շաքրէ հաց կըտանք,
Կ'ուրախսանաս։

— Ա՛յս, շաքրէ հաց չեմ սիրում,
Քաղցրեղէն չեմ ուտում.
Թողէք, դաշտի մորեկներն
Նաքրից լաւ եմ հաշւում։

«Այնտեղ, դաշտում ձմեռը
Դուցէ ցրտից մեռնիս,
Իսկ մեղ մօտ ոսկուց շինած
Վանդակի մէջ կ'ապրիս»։

— Օ՛, մի՛ վախէք՝ ձմեռը
Տաք կողմեր կըթոչեմ,
Իսկ բռնուած՝ դրախտն էլ
Ինձ բանտ կը համարեմ։

«Թռչնակ, թռչնակ, մենք ի՞նչպէս
Քեզ կըփայփայէինք,
Չէինք թողիլ, որ ախրես,
Միշտ կ'ուրախացնէինք»։

— Հաւատում եմ, բայց ձեր սէրն
Ինձ միշտ կըփնասէր,
Որովհետեւ այդ կերպով
Աչքս յաւիտեան կըփակուէր։

«Ճշմարիտ է, ովլ թռչուն,
Գերովիթեան չես տանիլ.
Աստուած քեզ հետ, դէհ, թռիր,
Աղատ, ուրախ եղիր»։

ՀԱՅԵՐԵՆ ԱՅԲՈՒԲԵՆԸ.

ա — Ա — Այթ	Ժ — Մ — Մեն
բ — Բ — Բեն	Ճ — Յ — Յի
գ — Գ — Գիմ	Ւ — Ւ — Ւու
դ — Դ — Դա	Զ — Շ — Շա
ե — Ե — Ել	Ո — Ո — Ո
զ — Զ — Զա	Հ — Զ — Զա
է — Է — Էլ	Պ — Պ — Պէ
ը — Ը — Ըթ	Ջ — Ջ — Ջէ
թ — Թ — Թո	Ա — Ա — Ամ
ժ — Ժ — Ժէ	Ո — Ս — Սէ
ի — Ի — Ինի	Ռ — Ռ — Ռէ
լ — Լ — Լին	Շ — Շ — Շին
իւ — Խ — Խէ	Ր — Ր — Րէ
ծ — Ծ — Ծա	Գ — Յ — Յու
կ — Կ — Կեն	ւ — Ւ — Ւեն
հ — Հ — Հո	Փ — Փ — Փիւր
ձ — Ձ — Ձա	Ք — Ք — Քէ
ղ — Ղ — Ղատ	Օ — Օ — Օ
ճ — Ճ — Ճէ	Ֆ — Ֆ — Ֆէ

Վ Ե Ր Զ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

(Երկրորդ մասի մեջ)

ԵՐԵ

- «2»—I. Փետուրէ գրեչ—II. Հոլ (բղզան):
- «4»—I. Զու:—Քուր, գետ:
- «9»—I. Մեղրահաց (բճիճ):—II. Կառքի անիւները:
- «13»—I. Հրացան:—II. Թուր, դաշոյն:
- «17»—I. Սեղան:—II. Հեշտաեռ (սամավար):
- «22»—I. Կրիպ:—II. Փեթակ և մեղրահաց:
- «27»—I. Թուրզը:—II. Հացահատիկներ:—III. Կուշ:
- «30»—I. Ոսկի և արծաթ:
- «34»—I. Բերան, ականջներ, աչեր:—II. Քիթ:
- «42»—I. Բերան և ատամներ:—II. Զեռներ, ոտներ, մատներ:
- «47»—I. Կարգալ-գրել:
- «51»—I. Մարդը՝ մանկական, այլրական, և զառամեալ հասկում:
- «55»—I. Արեգակ:
- «63»—I. Ճրագ և ճրագակալ:—II. Մոմ:



4534
2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0062903

